



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ԲԺ. Ա. Բուղուժեան.



ՆՈՒԵՐ  
ՀԱՅ  
ԶԻՆՈՒՈՐԻՆ

614.8

Բ - 94

Ա. ՊԵՏԵՐԱՅԻՐԴ  
ԸՆՈՒՅՆԻԿԱՆ ՏՊԱՐԱՆ  
1905

20 JUL 2010

614.8 - Կ  
F-94 • Բժ. Ա. Բուղուղեան.

ՄԵՐ ԷԺԱՆԱԳԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ

ՀՊԱ. ՏԻՎ. ԶԱՅԵԼԻ

1. Քարը երգում է . . . . .	10 կ.
2. Ճշմարիտ մեծութիւն . . . . .	7 "
3. Արդար ձերուային . . . . .	10 "
4. Մեծ տօն . . . . .	10 "
5. Նոր լոյս . . . . .	10 "
6. Ոխաման սէրը . . . . .	7 "
7. Մանկան ծօտ և վերջին խօսք . . . . .	7 "
8. Չընալ մարօն . . . . .	5 "
9. Մամթէօ ֆալկոնէ (Լբական) . . . . .	7 "
10. Դարպաւալի (մածուլի տակ է) . . . . .	7 "

ԴԻՄԵԼ՝ Թիֆլիս Կենդրունական և Գուտեմբերգ  
գրախանութեարին.

Բացուած է 2որս ամսուայ բաժանորդագրութիւն

Հ Ա Ս Կ Ե Ր

Մանկական պատկերազարդ ամսագրի.

Գինը 1 լ. 40 կ.

1905 թ: Սեպտեմբերից մինչև տարույ վերջը  
Հասցէն Թիֆլիս Բեհրութեան փողոց № 25  
Խմբ. Հրատ. Կատ. 1 ի Ս Ի Ց Ե Ա ն

«Առ. Լիսիլեան և բնկ» Հրատարակչական ընկերութիւն  
«Օտարազգի Հեղինակներ»

Առաջին վեցհատորնեակի մէջ մտնելու են յայտնի և-  
րոպական հեղինակների աշխատութիւնները. Կըրարան-  
չւոր հատորը կկազմի մեծագիր զիրոք. Վեցհատորնեակի  
զինը Թիֆլիսում 6 ր. ճանապարհածախոսվ 7 ր. Կարելի  
վճարել մաս-մաս, մէկ-մէկ բուրլի. Դիմել «Հասկեր»ի  
խմբագրութեանը:

## ՆՈՒԵՐ ՀԱՅ ԶԻՒՐԻՐԻՆ

(ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹԻՒՆԸ ՄԻՆՉԵՒ ԲԺՇԿԻ ԳԱԼԸ)

(20 պատկերներով)



Ա.-ՊԵՏԵՐԲՈՂԻՆ  
ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ  
1905

11.03.2013  
JUL 03

3911



Дозволено цензурою. С.-Петербургъ, 30 Апрѣля 1905 г.



4117  
411

„Пушкинская Скоропечатня“ Лештуковъ пер. 4.

Սովորելը մեծ գործ է, սիրելիս, բայց գիտցիք՝  
որ ամենամեծ զործն ուրիշն սովորեցնեն է: Քո  
ընկերական շրջանում առիթ կունենաս պատահելու  
ամուր կաղմուածք ունեցող մարդկանց և թուլա-  
կազմների, առողջների և հիւանդութեան հետքեր  
կրողների, կպատահես և անմաքուր մարմին ունե-  
ցողների, անհողների և ծովերի:

Պարզ է, որ մարդկանց մեծամասնութիւնն ան-  
տեղեակ է զեռ ևս՝ թէ որտեղից հեշտութեամբ  
կարող է հիւանդութիւն ստանալ, և ի՞նչպէս  
պէտք է ապրել, ինչպէս պէտք է վարուել հիւան-  
դութիւնից զերծ մնալու համար: Այս բոլորին ան-  
տեղեակ են նամանաւանդ զինւորները: Հետեաբար,  
օգտակար և անհրաժեշտ է քեզ համար, այս բոլորն  
իմանալ թէ՝ ծառայութեանդ ընթացքում և թէ՝  
ծառայութիւնիցդ յետոյ:

Ով ձեզանից երբ և իցէ հիւանդացել է, նա

զգացած կլինի՝ թէ ի՞նչ քաղցր բան է առողջութիւնը։ Այս, հիւանդութիւնը մեծ գժբախտութիւն է, պէտք է զգուշացնել հիւանդութիւնից լթէ բարեկամին և թէ օտարին, առանց սպասելու որեւէ վարձատրութեան։ Մարդուն տուած է կեանք, նրանակում է նրան պէտք է խնամել, իսկ որպէս զի կարող լինի խնամել՝ տրուած է միւնոյն ժամանակ և խելք, որը պէտք է զարգացնել ուսման միշտով։ Իսկ պաշտպանել կեանքը կարելի է միայն այն ժամանակ, երբ դու ինքդ կպաշտպանես առողջութիւնդ, երբ զերծ կպահես նորան հիւանդութիւնից, որովհետեւ ամեն մի հիւանդութիւն առաջ կրերէ առողջութեան քալքայումն, այս բանը միշտ պէտք է ի նկատի առնել, ուրիշներին պատմել և սովորեցնել։

Մէծ բան է զիտենալ՝ թէ ի՞նչ է հարկաւոր մարդուն՝ որպէսզի նա չհիւանդանայ, կամ որքան կարելի է քիչ հիւանդանալ—իւր ժամանակին դիմելով բժշկի, որպէս զի այսպիսով առիթ չտայ, որ հիւանդութիւնը յաղթէ իւր մարմնին։

Բայց որպէս զի այս բոլորը դու լաւ կարողանաս ըմբռնել, պէտք է իմանաս՝ թէկուղ մի քիչ և այն բանի մասին՝ թէ ի՞նչ է կատարւում մարդու մարմնի ներսում։ Երբ նա շնչում է և կամ ընդունում է ուտելիք եխմելիք։ և կամ ի՞նչ է կատարւում այն աւելորդ նիւթերի հետ՝ որոնք պէտք է դուրս արտադրւին մարդու մարմնից։


Կարող է պատահել, որ դու կընկնես զինւորական վարժանոց (ուչերնեալա կօմանդա)։ ի՞նչ բաղդաւորութիւն է քեզ համար՝ որ արդէն առա-

չուց նախապատրաստուած ես և զիտես այս բոլորը, այն էլ քո մալրենի լեզուով, որ աւելի հեշտ է լաւ հասկանալու և իւրացնելու համար։

Զինուորական ծառայութեանդ մէջ ազատ շատ ժամանակ ունես, պարապի՛ր, ընկերներիդ հետ կարգա, իսկ երբ կվերջացնես ծառայութիւնդ, կրերես հետդ քո նոր ուսումն հալրենի գիւղդ։ դոհ կլինես՝ որ քո զիտութեամբ օգնում ես ծարդկանց, որոշ օգուտ ես բերում։ և չես ապրի միայն քեզ համար— եսասիրութիւնը սպանում է մարդուն։

Կարդա աւելի շատ. զարգացիր խելքով և ճանաչիր ինքդ քեզ։ մարդու կազմուացքը շատ բարդ է։ Ոհա կազմախօսութեան և բնախօսութեան համառօտ հիմունքները։

ԿԱԶՄԱԽՈՍՈՒԹԻՒՆ ԵՒ ԲՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ  
Ահաւասիկ ներկայացնում Ենք մի համառօտ




Զե. 1.

հայեացք մարդու կազմութեան և կեանքի ընթացքի մասին, ուստի ինդրում ենք ուշադիր լինել:

Ոսկորները կազմում են մարդուս մարմնի հաստատուն մասը: Մկանունքների միջոցով կատարվում են մեր բոլոր շարժումները. իսկ ներփերը մեղ հաղորդում են (տալիս են) ամեն տեսակ զգացողութիւն ու տպաւորութիւն, նաև շարժումն են առաջ բերում: Սրտի գործունէութեան շնորհիւ արիւնը հաւասարապէս տարածում է մեր մարմնի մէջ. շնչառութիւնը մտցնում է մեր արեան մէջ կեանքի համար կարեւոր թթուածինը:

Կերած կերակուրը փոփոխութեան է ենթարկում ստամոքսի ու աղիքների մէջ, մարսւում է, մարմին ու արիւն է դառնում:



Զե. 2.

Ոսկորները մարդուս մարմնի հաստատուն մասն են կազմում և մէկ բառով կմաղք են կոչւմ: Նրանք կարծր և ամուր են, իրանց վերաբռնում պահում են մարմնի աւելի կակուզ, փափուկ մասերը: Թէ ոսկորները և թէ մարմնի փափուկ մասերը պահում, պաշտպանում են աւելի

նշանաւոր գործարանները (զլիի ու մէջքի ուղեղ, սիրտ, թոքեր, փորոտիք և այլն) և միանդամայն շարժումն են առաջ բերում:

1 Զեր ցոյց է տալիս, որ մարդու կմախքը կազմուած է հետեւեալ մասերից:—Պատկերներն առնուած են Պրօֆ. Էսմարխի գրքից:

### Ա. Գ Լ Ո Ւ Խ.

Գլուխը բաղկացած է գանդի ու երեսի ոսկորներից.—ընդամենը 20 հատ, որոնք պինդ, անշարժ միացած են միմեանց հետ, բացի ներքին ծնօտից որը շարժական է.

Գանդի ոսկորները տափակ են և միմեանց հետ միացած ատամնաւոր կերպով (Զե 2,), կարծես կարուած լինեն: Նրանք կազմում են այն խորշը, ուր ամեն կոլմից լաւ պաշտպանուած գտնում է մարդու ամենաանհրաժեշտ գործարանը, այն է՝ ուղեղը:

Դէմքի վերայ գտնուում են մեր զգալարանըների մեծ մասը, աչքը (տեսանելիք), ականջը (լսելիք), քիթը (հոտոտելիք), լեզուն (ճաշակելիք):

### Բ. Ո Ղ Ն Ա Շ Ա Ր.

Ողնաշարի ոսկորները, որոնց վերայ հաստատուած են զլուխը, անդամներն ու իրանը, կազմուած են 24 հատ ողներից, որոնք միացած են կոճիկային հիւսուածովե այդ պատճառով էլ մեր մարմինը կարող է նկուել և ուղղուել, և ցատկելիս կամ ընկնելիս, ոսկորների շփումը կամ ընդհարումը թու-

լանում է: Բոլոր ողները միմեանց հետ միանալով կազմում են մի խողովակ, որը իւր մէջ բովանդակում է մէջքի ուղեղը—զլիի ուղեղի շարունակութիւնը:

### Գ. ԿՐԾՔԻ ՎԱՆԴԱԿ.

Կրծքի վանդակը կազմուած է 12 զոյտ կողերից (7 հատ խսկական և 5-ը կեղծ), որոնք ետեւի կողմից շարժուն կերպով միացած են կոնակի ողների հետ, իսկ առաջի կողմից կռնիկով կրծոսկրի հետ:

Կրծքի վանդակը կազմում է կրծքի խորշը և ամփոփում է իւր մէջ արիւնադարձութեան և շընչառութեան ամենակարեւոր գործարանները.—սիրտն ու թոքերը: Կրծքի խորշը փորոտիքից բաժանուում է մի մսուտ անջրպետով, որը ստոծանի է կոչում և որը կծկուելու ու լախանալու յատկութիւն ունի: Ներշնչելիս նա կծկում, հարթանում է, որով կրծքի խորշը մեծանում է, իսկ արտաշնչելիս գողաւոր է դառնում, գմբէթի ձև է ընդունում:

### Դ. Կ Ո Ւ Ք.

Սա մի լայն, ամուր ոսկրային օղակ է, երեք մեծ ոսկորներից կազմուած, երկու չանախից (կըշտոսկոր) և մի սրբանոսկրից: Նա մի հաստատուն յենարան է փորոտիքի համար և իրանը միացնում է ոտերի հետ՝ զօրաւոր բայց շարժուն յօդերի միշոցով:

Ե. Ա. Ն. Դ. Ա. Մ. Ն. Ե. Բ.

Անդամները լինում են վերին և ստորին—ձեռներ ու ոտեր: Ձեռի սսկորներն են. անրակ, թիակ (ուսոսկը), բազուկ, նախաբազուկ (ծղոսկը և արձկոսկը) և բուճ ձեռ, որը բաղկացած է 27 մանր սսկորներից (8-ը զաստակ, 5-ը ափոսկը և 14-ը մատներ): Վերին անդամները աւելի շարժուն—խաղացկուն են, քան ստորին անդամները, որովհետեւ նրանք կազմուած են անրակից և շարժուն ուսոսկրից:—Ստորին անդամները կամ ոտերը հետեւալ ոսկորներն ունեն. բարձոսկը, սրունք, որը երկու սսկորից է բաղկացած,—ոլոք և ճարմանդ և բուճ ոտից, որը բաղկացած է 26 մանր սսկորներից և բաժանում է երեք մասի թաթ 7 սսկրից (կրունկ, կռճիկ և ալն), ենթաթաթ—5 սսկրից և մատներ 14 սսկրից:

Ոսկորները միացած են պինդ կապերով, որոնք հնարաւոր են դարձնում նրանց որոշ ուղղութեամբ շարժուելը: Այդ կապերը կոչվում են

Զ. ՅՕԴԵՐ

Արանք պինդ փակում են երկու ոսկորների միացման տեղը իբրև պարկ: Միացած ոսկորների շփուղ ժայրերը ժածկուած են կռճիկով կամ աճառով, ուստի և անարգել սահում են իրար վրայից. յօդակապային պարկն էլ ներքուստ արտադրում է մի տեսակ մածուցիկ (կպչուն) հեղանիւթ,

որը յօդային կռճիկների շփման առաջն է առնում, ինչպէս որ իւղը հեշտացնում է որ և է մեքենայի մասերի շարժումը: Յոդով միացած ոսկորները շարժում են շնորհիւ

Է. ՄԿԱՆՈՒԽՆԵՐԻ (ՄԻԱ)

որ կարմրագոյն կակուղ նիւթ է, կաղմուած բազմաթիւ թելերից, որոնք կծկուելու, ալսինքն կարճանալու, հաստանալու և կրկին ձգուելու յատկութիւն ունեն: Այսպիսի յատկութեամբ նրանք իրար են մօտեցնում այն ոսկորների ծայրերը, որոնց մէջ ձգուած են, օր—ուսոսկրի երկզիւեան մկանունքը: Շատ մը կանունքներ, եթէ նրանց ոսկրի կպած ծայրերը իրարից հեռացած են, վերջանում են սպիտակաւուն թելերով որ կարշ (սուխոօժիկի) են կոչւում և նրանք կրծկուելու յատկութիւն չունեն:

Մկանունքները կծկում, շարժում են կամ կամաւորապէս, մեր զիսի ուղեղի հրամանով, որ նա տալիս է ներվերի միջոցով, որոնք տարածուած են մեր մկանունքների մէջ և կամ ակամայ, երբ նրանց շարժումը կատարում է առանց մեր կամքին, զիտութեան և զգացողութեան, ինչպէս օրինակ՝ սրտի, ստամոքսի, աղիքների շարժումը:

Ը. ՆԵՐՎԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒԹԻՒՆՆ

Մի վերին աստիճանի բարդ և միանգամայն զարմանալի կազմակերպութիւն է. այդ տեղ են կենդրոնացած կետների և նրա բոլոր երևոյթների զըլ-

խաւոր կենդրոնները: Ներվալին դրութեան զրլ-  
խաւոր մասերն են՝ գլխի ուղեղը, մէջքի ուղեղը  
և ներվերը:

Թ. Գլխի ՈՒՂԵՂԸ

Սա ամփոփուած է դանդի խոռոչում և ներ-  
կայացնում է մի ներվալին նիւթից բաղկայած  
սպիտակ-գորշ փափուկ, բոլորակ զանգուած: Նրա  
մակերեսիմի վերայ տեսնուած են բազմատեսակ  
ակոսներ ու գալարուածքներ (Ձև 3): Ուղեղը շատ  
բարդ կազմութիւն ունի:




Ձև 3.

Եթէ ուղեղը կտրենք վերեից վար, պարզ կր-  
տեսնենք, որ նրա ներքին մասը սպիտակ նիւթից  
է, իսկ արտաքինը՝ գորշ նիւթից, և այս արտա-  
քինի վերայ գտնվում են ակոսներ, ծալքեր ու ցր-  
ցուածքներ: Այստեղ է մեր մտածողութեան, կամ-  
քի ու զգացողութեան կենտրոնը. զլիխ ուղեղից  
կախումն ունի մեր բոլոր կենսական գործունէու-  
թիւնը:

Մարզու և կենդանիների ուղեղները զարմա-  
նալի կերպով տարբերուած են մեծութեամբ (մար-  
զու ուղեղը մարմնի քաշի  $\frac{1}{40}$  մասին է հաւասար.  
Փղինը  $\frac{1}{500}$ , իսկ կէտինը  $\frac{1}{3000}$ ):

Գլխի ուղեղից սկիզբն են առնուած շատ ներվեր,  
որոնք անցնելով գանկի զանազան ծակերից, գնում  
են դէպի մեր զգայարանըները՝ հոտառութեան, լրսո-  
ղութեան, տեսողութեան և ծաշակառութեան ներ-  
վեր: Գլխի ուղեղի գլխաւոր շարունակութիւնն է

Թ. Մէջքի ՈՒՂԵՂԸ.



Ձև 4.

Սա մի երկար, գլանակածև, սպիտակ ու փափուկ

նիւթ է, կազմուած ներվերից և ներվալին դրցակ-  
ներից (Ձև 4): Նա ամփոփուած է ողնաշարի  
խողովակի մէջ և երկու կողմերից արծակում  
է 31 զոլգ ներվալին ծիւղեր, որոնք անցնե-  
ով ողնաշարի որոշ ծակերից՝ գնում մտնում են  
մարմնի բոլոր մասերի մէջ, և կամ արտաքին  
տպաւորութիւններ են հաղորդում զլիսի ուղեղին  
(զգայական ներվեր) և կամ շարժումն են առաջ  
բերում (շարժիչ ներվեր):

Ժ Ա. Ն Ե Ր Վ Ե Ր.

Սրանք սպիտակ դերձաններ են և հետզհետէ  
նիւղաւորուելով մատիտի հաստութիւնից հասնում  
են ամենաբարակ ներվերի, որ միայն խոշորացուցով  
կարելի է տեսնել: Ներվերը տարածւում են մարմնի  
բոլոր մասերում և առաջ են բերում զգացողու-  
թիւն, շարժումն և նաև նպաստում են կերակրի  
մարսելուն: Նրանց սկիզբը գտնվում է զլիսի ուղեղի  
մէջ: Ներվալին համակարգութիւնը կարելի է նմանեց-  
նել հեռազբական ցանցի. զլիսի ուղեղը՝ կենդրո-  
նական կայարանն է, երկրորդական կայարանի զրլ-  
խաւոր թելերը գտնվում են մէջքի ուղեղում, իսկ  
ներվերը՝ առանձին առանձին թելերն են: Արտաքին  
աշխարհից տեղեկութիւններ բերում են զլիսի ուղեղին  
և ալստեղից էլ կայժակի արագութեամբ հաղորդ-  
ւում են հրամաններ (անդրագարծ գործողութիւն-  
ներ՝ ընթերցմունք, նուագումն, քալուամբ, գրու-  
թիւն են, ևն,):

Երբ զլիսի ուղեղը վնասուում է, կամ նրա  
մէջ արիւն է լցվում, մարդու զիտակցութիւնը,  
շարժողութիւնը, զգացականութիւնը, խօսելու կա-  
րողութիւնը անհետանում է: Իսկ երբ մէջքի ու-  
ղեղն է վնասուում, առաջ է գալիս անդամալուժու-  
թիւն վնասուած տեղից ներքեւ գտնուած մասում  
(հաղորդականութեան ընդհատում): Իսկ երբ ներվը  
կտրվում է (հարուած, ծակոց), առաջ է գալիս զգա-  
ցողութեան կամ շարժման դադարում, անդամա-  
լուժութիւն: Երկար ուղեղի վնասուելուց (կենսա-  
յին հանգոյց) որ յառաջ է գալիս կախուելուց, վիզը  
կոտրելուց, ևն, անմիջապէս մահ է առաջ զալիս:

Այս բոլոր տեղեկութիւնները ստացուել են  
մանր զիտողութիւններ անելով մարդոց վերայ կամ  
փորձեր կատարելով կենդանիների վերայ:

Այսպիսի փորձերը և մինչև իսկ կենդանահա-  
տումները (վիվիսեկցիա) անչափ մեծ օգուտ են բե-  
րում մարդկութեան, այն ինչ այդպիսի գործողու-  
թիւններ կատարել կենդանիների վերայ կեղծ զթա-  
սրտութեամբ արգելուած են բժիշկներին Անդի-  
ալում և մասամբ իսկ նաև Գերմանիայում:

Բացի ներվալին այս համակարգութիւնից կայ  
մի այլ ես ներվալին համակարգութիւն, որը ենթարկ-  
ւած չէ կամքի հրամաններին, որ ազգում և կա-  
նոնաւորում է մեր կամքից անկախ կեանքի համար  
անհրաժեշտ մի քանի գործարանների գործառնու-  
թիւնը, արիւնազարծութիւնը, շնչառութիւնը, սր-  
նունդը, արտաթորումը ևն: Ներվալին այս համա-  
կարգութիւնը կոչւում է համակարի կամ զղալին  
հանգոյց: Այս համակարգութիւնը գործում է ան-

ընդհատ՝ մինչև իսկ երբ մարդ քնած է կամ ան-  
րզայ վիճակի մէջ է գտնվում (կաթուած, գանգի  
զնասում, արբեցութիւն ևլն):

Ներվային այս համակարգութիւնը ներկայա-  
ցնում է երկու երկայն գորշ ծիւղեր, որոնք գտնվում են  
ողնաշարի երկու կողմի երկայնութեամբ, ունեն շատ  
հանգուցներ և արձակում են բաղմաթիւ նուրբ թե-  
լեր՝ առաւելապէս դէպի այն գործարանները որոնք  
մեր կամքից անկախ են գործում (սիրա, թոքեր,  
ստամոքս, աղիք ևն): Բաղմապիսի միացումներով  
ներվային այս համակարգութիւնը կապուած է կա-  
մաւորական ներվային համակարգութեան հետ, այն-  
պէս որ նրանց գործառնութիւնը կախումն ունի  
միմեանցից:

#### ԺԲ. ԱՐԻՒԽՆԴԱՐՁՈՒԹԻՒՆ.

Կարծրագոյն, տաք կենսային հեղանիւթը՝ որը  
արիւն է կոչվում, անդադրում և մեծ արագու-  
թեամբ անցնում է բաղմանիւղ խողովախների (ա-  
նօթների) միջից, որոնք սփոռուած են մարմնի բոլոր  
մասերում: Արիւնը շարժող գործարանը կոչվում է

#### ԺԳ. ՍԻՐՏ

Սա ոչ զգացմունքների և ոչ էլ զգացողութիւն-  
ների կենցրոնն է, այլ վարպետորէն կազմակերպուած  
մաեղէն մի ջրհան է, մի սնամէջ (պօշ) մկանունք,  
որ ներքուստ դռնակներ (խուփեր) ունի (ԶԼ 5): Սիրտը  
կանոնաւորապէս կծկվում և կրկին լայնանում է,  
երբ որ այս շարժումը դադարում է, սիրտն

էլ կանգ է առնում և մահը արագ վրայ է հասնում:  
Սիրտը գտնվում է կրծքի խորշում՝ երկու թոքերի  
մէջ տեղ և պատած է մի թաղանթով, որ սրտի  
առագաստ կամ սրտակրանք է կոչվում. նա կոնա-  
ծե է, սուր կողմով վար ու ծախ ծռուած և բը-  
ռունցքի մեծութեամբ: Մասլին անչրպէտով սիրտը  
բաժանվում է երկու մասի. ծախակողմեանք աւելի  
զօրաւոր արիւն է մատակարարում մեր մարմնին,  
աչակողմեանք՝ մղում, քշու մ է արիւնը դէպի թա-  
քերը՝ (ԶԼ 5):

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ



ԶԼ 5.

Սրտի ծախակողմեան մասից արեան հոսանքը  
մտնում է բնաշնչերակը (աօրտա), մի խողովակ, որը  
մատի հաստութիւն ունի: Նա հետզհետէ բաժան-  
վում է աւելի ու աւելի նեղ, առածգական խողո-  
վախների, ճիւղերի:



ԺԴ. ՇՆՁԵՐՈՅ.Կ (ԱՐՑԵՐԻԱ)

Շնչերակները այլ և այլ անուն ունեն, նաև լով թէ մարմնի որ մասի միջով են անցնում, որ մասին արիւն են տալիս, այսպէս կան զիսալին շնչերակ, բազկալին շնչերակ, բնաբեր շնչերակ են:

Պոլս ասելով հասկանում ենք արեան հոսանքի կանոնաւոր զարկը շնչերակի պատերին: Այդ զարկը զգալի է մեր մարմնի այլ և այլ մասերում, ոչ միայն նախաբազուկի, այլ և զղի, զլխի, բռնքի և աճուկի վրայ:

Շնչերակները հետպհետէ ծիւղաւորուելով՝ աւելի նրանում, աւելի բարականում են և կազմում են խողովակների մի այնպիսի ցանց, որոնք ամենանուրը մազից էլ բարակ են ( $^{(2)} / 1000$  միլիմետր լայնութեամբ) և տեսանելի են միմիայն խոշորացնող ապակիով: Արեան այս նուրը ու բարակ խողովակները մաղալին անօթներ են կոչվում, նրանք մեր մարմնի մէջ ամեն տեղ են դանվում և մեր կաշուն կարմրութիւն են տալիս: Երբ մատով սեղմում ենք մեր կաշին, սեղմուած տեղը սպիտակում է, և կրկին կարմրում է երբ դադարում ենք սեղմելուց: Սեղմելով՝ մաղալին անօթներից արիւնը հեռացնում ենք և ապա նրանք կրկին լցվում են: Թշի կարմրելը ուրիշ բան չէ՝ եթէ ոչ մաղալին անօթների յանկարծապէս արիւնով լցուելը. իսկ երբ հոգեկան լուզումների ժամանակ մէկը սփրունում, զունատվում է, այդ ցոյց է տալիս, թէ արիւնը մաղալին անօթներից մտնում է մարմնի ներ-

քին մասերը: Ասեղով մատները ծակելիս, կամ դանակով կտրելիս՝ մենք վնասում ենք այդ մանր անօթները և արիւնը կաթ—կաթ դուրս է զալիս ինչպէս ջուրը սպառնվից:

Մազային անօթները ամենահուրբ կերպով ծիւղաւորելուց յետով՝ կրկին միանում և աւելի հաստ ծիւղեր են կազմում, որոնց միջով արիւնը վերադառնում է դէպի սիրտը: Այս անօթները կոչվում են

ԺԵ. ԵՐԱԿՆԵՐ (ՎԵՆԱ),

որոնք իբրև կապոյտ լարեր պարզ կերպով տեսնվում են մեր ձեռի երեսին, երբ մանաւանդ ձեռներս կախում ենք, և համարեա թէ աննկատելի են դառնում, երբ ձեռներս բարձրացնում ենք:

Երբ ասեղով ծակվում է երակը, այնտեղից մութ կարմիր (սև) արիւն է դուրս զալիս հաւասարաչափ հոսանքով. իսկ երբ շնչերակն է ծակվում պայծառ կարմիր արիւն է դուրս ցայտում, այսինքն՝ հոսում է աւելի ուժով, արագութեամբ և մղումով, որովհետեւ սրաի կծկուելովը նա շնչերակներից դուրս է մղվում:

Ինչի՞ց է առաջ զալիս արեան գոյնի այս տարբերութիւնը:

Ժ Զ. Ա. Ր Ի Ւ Ն.

Արիւնը բաղկացած է զեղնաւուն, թափանցիկ հեղանիւթից—շինուկ, (որ այրուածքից առաջացած բշտիկների մէջ լինում է) և մանր, տա-

փակ կարմրագոյն գնդակներից, որոնք միայն խոշորացոյցով կարող են նկատուել: Մի կաթիլ արեան մէջ լինում են 4—5 միլիոն գնդակներ, իսկ չափահաս մարդու բոլոր արեան մէջ 25 միլիարդ. (մարդուս մարմնի ամբողջ քաշի <sup>1/12</sup> կանք արիւնն է կազմում, այսինքն՝ մօտաւորապէս 10 ֆունտ, երբ մարմինը կշռում է 130 ֆ). բայց թողնուած արիւնը իւր բաղադրիչ մասերին է բաժանվում, մակրդուելով: Բացի կարմիր գնդակներից՝ արեան մէջ զանգում են նաև սակաւ քանակութեամբ «արեան ճերմակ գնդակներ», որոնցից բնդհանրապէս կազմվում է թարախը:

Արիւնը մեր մարմնին տալիս է սնունդ ու տաքութիւն: Թէ առաջինը և թէ երկրորդը կատարւում են զլիաւորապէս արեան կարմիր գնդակների միջոցով: Մութ կարմիր արիւնը բովանդակում է առաւելապէս ածխաթթու, իսկ պայծառ կարմիր արիւնը՝ աւելի թթուածին:

Պայծառ կարմիր արիւնը ամենանուրը մազալին անօթներից անցնելիս՝ մարմնին տալիս է թթուածին և ընդունում է ածխաթթու: Ճիշտն ասելով, արեան շրջանառութեան ժամանակ նոյն զործողութիւնն է կատարվում, ինչ որ և այրուելու ժամանակ, երբ նոյնպէս զործադրվում է թթուածին և բաժանվում է ածխաթթու. այսպիսի զործողութեամբ պահպանվում է մեր մարմնի չերմութիւնն ու մննդառութիւնը:


Իւր պաշտօնը կատարած ածխաթթուով լի թուի արիւնը երակներով կրկին դառնում է դէպի սիրտը, կրկին մաքրվում է, այսինքն տալիս

է ածխաթթուն, ընդունում է թթուածին և դառնում է դարձեալ պայծառ, կարմիր:

Այս երեսիթք կատարվում է արեան փոքր շրջանառութեան ժամանակ թոքերի մէջ շնչառութեան միջոցով:

### ԺԷ. ԹՈՔԵՐԸ.

Երկու սպոնդանման, արիւնով հարուստ ու բլթակների (մասերի) բաժանուած պարկեր են կրծքի խորշում, սրտի երկու կողմը, և արտաքուստ ծածկուած թոքալին թաղանթով (ԶԼ 6): Նրանց մէջ կրծքի վանդակի կանոնարապէս բար-



ԶԼ 6.

ձրանալովը, ինչպէս և ստոծանու կծկուելովը օղը շարունակ ներս է մտնում և դուրս գալիս: Օղը նախ մտնում է շնչափողը, որը ծառի նման աւելի ու աւելի մանր ճիւղերի է բաժանվում, որոնք վեր-

չանում են անհամար մանրիկ բշտիկներով, որոնք ծածկուած են արեան փոքր շրջանի բազմաթիւ մազալին անօթներով, որ արիւն են ստանում սրտի աշ կիսամասից.—Այս բշտիկների մէջ մտնող օդից մազալին անօթները թթուածին են առնում, և իրանցից հեռացնում են ածխաթթուն, որը մեծ քանակութեամբ գտնվում է մեր արտաշնչած օդի մէջ։ Այսպիսի գործողութեամբ արիւնը կրկին պայծառ կարմիր է դառնում, մտնում է սրտի ծախ կիսամասը և այստեղից էլ տարածվում ամբողջ մարմնի մէջ։

Թթուածինը օդի կենդանարար և մննդատու մասն է, իսկ ածխաթթուն—ալրման արդիւնք, աւելցուք, մոխիր, որ սննդառութեան համար կարեոր չէ, ուստի և պէտք է մարմնից դուրս հեռացուի։

Եթէ այս արտահանումը ունէ կերպով դժուարանայ (օր. շնչափողի նեղացման, խեղդուելու, կախուելու և այն ժամանակ), արագապէս մահր վրայ է հասնում, (ածխաթթուուոից թունաւորում)։ Նոյն անշնչացման երևոյթն է առաջ դալիս՝ երբ թոքերի մէջ թթուածին չի մտնում (ինչպէս որ մուկը սատկում է փակ խուփի տակ կամ Վալկատայի սև քարայրում)։

Բացի ածխաթթուից նիւթերի փոխանակութեան ուրիշ մնացորդներ ևս լինում են, որ նորա պէս պէտք է զուրս հանուեն, այն է չուրը և մէզիտը (մօչեինա)։ Զուրը մեր մարմնից արտահանվում է մասսամբ թոքերով (մեր արտաշնչած խոնաւ օդը), մասսամբ մորթով (քրտինք) և վերշապէս

երիկամունքով (պլոճիկ)։ Մէզիտը բովանդակում է մեր մարմնի իւրացրած նիւթերի բորակային անպէտք մասերը, մեծ քանակութեամբ չըի մէջ լուծուած, որը դուրս է հանվում

Ժ. ԵՐԻԿԱՄՈՒԻՆՔՆԵՐՈՎ,

Որոնք երկարաձեւ, տափարակ, լոբիաձեւ մարմին են և գտնվում են որովայնի յետեի պատի վերեր, ողնաշարի երկու կողմքը։ Մէզիտը (մէզը) դուրս գալով երիկամունքներից՝ երկու երկայն խոռովակներից անցնելով հաւաքվում է միզափամփուշտի մէջ, որ գտնվում է կոնքի վարի կողմքը դէպի առաջ։ Անպէտք նիւթերի արտահանման համար ոչ նուազ կարեոր է և

Ժ. Թ. Կ. Ա. Շ Ի Ն.

Որ ծածկում է ամբողջ մարմնը և իրրեւ տաքութեան վատ հաղորդիչ պահպանում է մեր մարմնի տաքութիւնը, այսինքն՝ չի թողնում, որ մենք տաքութիւն կորցնենք։ Նոյնը կատարում է և մեր կաշու տակ գտնուած հարպային շերտը։

Կաշու տակ գտնվում են անթիւ անհամար քրտնաբեր գեղձեր (մօտ 3 միլիոն), որոնք 24 ժամուայ մէջ համարեան նոյնքան չուր են դուրս հանում, որքան և երիկամունքները (մօտ  $2^{1/2}$  ֆունտ 24 ժամում)։ Այդ արտահանումը լինում է կամ իրրեւ քրտինք և կամ իրրն աննկատելի դոլորշիացում։

Այս ջրէ մէջ բովանդակվում են ոչ նուազ քանակութեամբ անպէտք նիւթեր (այն է աղեր՝ մօտ 2 մսխալ), որոնք մնալով մարմնի մէջ կարող են մեր առողջութիւնը վտանգել (պէտք է խնամք տանել կաշու մաքրութեան, լուացուել):

Ի. Կ Ե Ր Ա. Կ Ո Ւ Ր Բ.


Մառայում է մեր մարմնի արդէն մաշած ու հեռացուած մասերը փոխարինելու և օրգանիզմի նորոգութեան համար նոր նիւթեր պատրաստելու: Որպէս զի կերակուրը այս նպատակին ծառալի, նա պէտք է անցնի այլ և այլ լայնութեամբ մկանալին խողովակներից մարսողութեան գործարանը, ուր նրանից առնվում են այլեւ այլ սննդարար նիւթեր, որ յետոյ մտնում են արեան մէջ, (մարսողութիւն ԶԼ 7)

Բերանի խորշում կերակուրը մանրվում է ատամներով, խառնվում է թուքի հետ, և որկորից, որըն շնչափողի ետևն է դտնվում, անցնում է կերակրափողը և մտնում է

Ի Ա. Ս Տ Ա. Մ Ո Ք Ս Բ.

Սա մկանալին մի մեծ պարկ է, որի պատերը ներքուստ բազմաթիւ ծալքեր ունեն, որոնք արտադրում են ստամոքսալին թթու հալեցնող հոյզ: Այս հոյզը խառնվում է կերակրի հետ ստամոքսի անրնդհատ շարժման պատճառով Այս կերպով ստացուած սննդարար նիւթերի խառնուրդը ստամոքսի

կծկումով աղիքների մէջ է մղվում, և աղիքների որդնածեւ շարժումով առաջ է գնում: Աղիքների պատերի մէջ գտնուած աւշային անօթները, այս կերակրի խառնուրդից ծծում են բոլոր մննդարար մասերը և իրրև կաթնագոյն հիւթ (մամաց= խլուց) մտցնում են արեան մէջ:



ԶԼ 7.

Կերակրի խառնուրդը մտնաց դառնալու համար պէտք է ենթարկուի որոշ մարսեցուցիչ հիւթերի ազգեցութեան, այն է՝ մաղձի, որը պատրաստվում է լեարզի մէջ (դտնվում է ստոծանու տակր, աչ կողմը) և ենթա-ստամոքսալին հոյզի (մսահոյզի), որ առաջ է գալիս սրամոքսի ետևը գտնուած գեղձից:

Կերակրի մնացորդը, որ այլ ևս չի բովանդակում ոչ մի սննդարար նիւթ, գնում հասնում է մինչև աղիքի ծալրը (ուղիղ աղիք) և ալստեղից դուրս է հետվում:

### ՀԻՒՍՆԴՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՍՏԻԿՆԵՐ

Երբ մարդու կազմուածքը, զանազան պատճառներով, կորցնում է իւր բնական դրութիւնն ու ներքին հաւասարակշռութիւնը՝ առաջ է գալիս գործարանների խանգարումն, որը և կոչում է հիւանդ կազմուածք: Այդպիսի կազմուածքը առաջ է բերում նոր զգացողութիւններ և նոր երևոյթներ մարմնի գործունելութեան մէջ Ահա այս նոր զգացողութիւններն ու երեսոյթները, որոնք յատուկ են հիւանդ կազմուածքին և պարզ կերպով ցոյց են տալիս՝ թէ ի՞նչ է կատարում մարդու ներսում, նորա գործարանների մէջ, ընդհանուր անունով կոչում են աստիկներ (սիմպոմներ):

Գլխաւոր աստիկները հետեւալներն են.

1. Ցաւ և զգացողութեան փոփոխութիւն.
2. Հեղոց.
3. Հաղ և խորիսի արտադրութիւն.
4. Իապտութիւն (Ցիանօս)
5. Ջրգողութիւն.
6. Սրտի բարախումն
7. Փսխելը.
8. Զկրտալը և ախորժակի խանգարումն.
9. Փորլուծութիւն և Փորկապութիւն.
10. Փորի ուռչելը (մէթէօրիզմ)
11. Դեղնախտ
12. Մէղի խանգարումն.
13. Տենդ.
14. Անդիտակից դրութիւն
15. Շարժման ընդունակութեան սահմանափակում և կորուստ.
16. Կաշուի դուրս տալը (ցաներ):

Այժմ այս բոլոր աստիկները նայենք առանձին առանձին:

Ցաւը, ինչպէս և ամեն մի անձնական տկարութիւն՝ ամենից առաջ կախուած է հիւանդի անհատականութիւնից: Ցաւի էութիւնն այն է՝ որ մեր զգացող ներվերը այս կամ այն տեղում ստանում են անսովոր գրգիռ և այդ հաղորդում են մեր զիտակցութեան:

Ցաւի զգացողութեան աստիճանը և նորա որպիսութիւնը զանազան տեսակ են լինում. ցաւի զգացողութեան աստիճանից չի կարելի եղրակացնել հիւանդութեան ծանրութեան մասին:

Երբեմն փոխանակ ցաւի զգացողութեան պատճառում է, որ հիւանդը կորցնում է իւր ամբողջ զգացողութիւր՝ այդպիսի վէպքում կաշուի մասնաւոր և կամ ընդարձակ տեղի գրգռումը առաջ չի բերում համապատասխան զգացողութիւն. Այդպիսի երեսոյթներ տեղի են ունենում կաթուածների (պարալիչների) և ուրիշ հիւանդութիւնների, գլխաւորապէս ներվալին համակարգութեան խանգարման ժամանակ:

Հեղոց կոչվում է արագ կատարուող ոչ խոր շնչառութիւնը. այդ երեսոյթը ի միջի ալլոց առաջ է գալիս արեան փոփոխութիւնից և շրնչափողում եղած զանազան արգելքներից և կամ սրտի ներվալին համակարգութեան անկանոն գործունէութիւնից. անշուշտ կարող են այս պատճառները միասին տեղի ունենալ:

Հաղն առաջ է գալիս շնչափողի մաղասալին թաղանթի զրգուուելուց. հաղի ժամանակ մենք ար-

տաղրում ենք խորխ, որի մէջ կարող են լինել մազաս, թարախ, փոշի, երեմն և արիւն:

Սրեան որոշ չափով երեալը խորխի մէջ կոչում է արիւնաթքումն, բայց պէտք է զանազանել խական արիւնաթքումը խորխի և արեան միացումից, որը դալիս է բերանից և բթից:

Սրիւնաթքումը կարող է առաջ գալ և այլ պատճառներից, և միշտ հետեւանք չէ թոքերի հիւնում է թոքերի, կոկորդի, և սրտի հիւանդութեան ժամանակ:

Սաստիկ հազի ժամանակ շատ անգամ ցաւ է առաջ գալիս ներքին կողերի սահմաններում, որը կախուած է նոյա հազի ժամանակ կատարած յածախակի և ուժեղ շարժումներից: Հազի ժամանակ երբ չի լինում խորխ՝ կոչում է չոր հազ, որը շատ տանջում և նիհարացնում է հիւանդին:

Կայ և մի այլ տեսակ զուտ ներվային հազ. բայց արդարիսի հազ քիչ անգամ է պատահում:

Կապտութիւնը լինում է մասնաւոր և ընդհանուր, առաջնը կախուած է արտաքին պատճառներից (սեղմուած մատ, ցրտից կապտած քիթ), իսկ ընդհանուր կապտութիւնը տեղի է ունենում արիւնադարձութեան և շնչառութեան գործարանների խանգարման պատճառով: Կապտած տեղը առհասարակ, շոշափած ժամանակ սառն է լինում:

Ջրգողութիւն կոչում է հեղուկի աւելորդ մասի հաւաքուելը կաշուի տակ, կամ մեր մարմնի խորչերում: Երբ մարմնի մի որեւէ մասն է միայն վնասուած, օր ոտք, այն ժամանակ չեն ասում

ջրգողութիւն, այլ՝ ջրակալումն, ալսինքն հասարակուուցք:

Ջրակալուած մասերը ծաւալով մեծ են լինում, դժգուն, լարուած և շոշափելիս սառըն:

Ջրգողութիւնը մի շատ սովորական աստիկ է, որը կարող է տեղի ունենալ երիկամունքների, սրբի, լեարդի և շնչառութեան գործարանների հիւանդութեան ժամանակ:

Սրտի բարախումն կամ սրտի արագնթաց գործունէութիւն կարող է բոլորովին ոչ հիւանդացնող պատճառներից առաջ գալ. օր. ուրախութիւնից, արտմութիւնից, ծիծաղից, արագ քայլուց, ծանրութիւն վերցնելուց ևն: Ինչ վերաբերում է հիւանդացնող պատճառներին, որոնք և փոխում են սրտի գործունէութեան եղանակը, նոքա կապ ունեն սրտի և թոքերի հիւանդութեան հետ:

Փսխումը մի գործողութիւն է որը գուրս է նետում ստամոքսում գտնուած նիւթերը. փսխումից առաջ տեղի է ունենում սրտի խառնուելը, որի ժամանակ արտադրում է մեծ քանակութեամբ թուրք և մեծ քանակութեամբ էլ օդ է կուլ գնում: Փսխելու ամենտսովորական պատճառը լինում է ստամոքսի մազասային թաղանթի անսովոր նիւթերով գրգռուիլը. բայց կարող է առաջ գալ և ուրիշ պատճառներից, օր. զլիսի և ողնաշարի ուղեղների զանադան հիւանդութիւններից:

Երբեմն փսխելու ժամանակ բացի ստամոքսում եղած նիւթերից՝ զուրս է գալիս և արիւն, որը կոչում է արիւնային փսխումն. սա հետեւանք է ստամոքսի արեան անօթների խանգարմանը:

Զկրտալն առաջ է գալիս այն դէպքում՝ երբ մենք ստամքսից որկորի միշոցով դէպի վեր ենք ձղում ոչ թէ կոշտ կամ հեղուկ նիւթեր՝ այլ գաղեր:

Զկրտալու ժամանակ զուրս եկած դազերը բաղկացած են կուլ տուած օդից և կամ այլ գաղերից՝ որոնք գոլանում են սնունդի մարսողութեան ժամանակ. վերջին դէպքում՝ այդ գաղերը յաճախ ունենում են անախորժ հոտ:

Ախորժակը լինում է և ուժեղ, և թոյր տենդային ծանր հիւանդութեան ժամանակ ախորժակի պակասումը կապուած է ծարաւի սաստկութեան հետ. այսպիսի դէպքում լեզուն առհասարակ ժամկուած է լինում նուրբ փառով:

Երբեմն հիւանդն ունենում է այսանդակ ախորժակ, այսինքն առաջ է գալիս ցանկութիւն ուաելու անսովոր իրեր, օր. ածուխ, կաւին, կիր ևն:

Այդպիսի երեոյթներ նկատում են մէկ այն ժամանակ՝ երբ հիւանդը ճիճու է ունենում և մէկ էլ արեան պակասութեան մի քանի դէպքերում ու ներվային համակարգութեան որոշ հիւանդութիւնների ժամանակ: Յամենայն դէպս՝ ախորժակի խանգարումն ապացուց է՝ որ ստամքսը և աղիքները գտնուում են անբնական դրութեան մէջ:

Փորլուծութիւն կոչում է շատ արագ կըրկընուող անբնական հեղուկի դուրս ելնելը, որը կախուած է աղիքների ուժեղ շարժուելուց (պերիստալտիկա) և առաջանում է նոցա մաղասալին թաղանթի բորբոքումից. ուղիղ աղիքի մշտական և

հիւանդագին դրդուումը յաճախակի նքոցի հետ՝ կուում է տենեղմ:

Փորկապութիւն կոչում է կղկղանքի կուտակումը աղիքների մէջ, և նոցա դանդաղ կերպով դուրս արտաթորումը. որն առաջանում է աղիքների գործունէութեան թոյլ պերիստալտիկալից:

Փորլուծութեան և փորկապութեան ժամանակ՝ անհրաժեշտ է ուշագրութիւն դարձնել արտաթորուած նիւթերի վրայ, որոնք կարող են պարունակել իրանց մէջ և ուրիշ անսովոր նիւթեր. այսինքն մաղաս, արիւն, թարախ, ճիճու և այլն: Շատ անգամ պատհում է՝ որ ուղիղ աղիքը դուրս է դառնում, այսպիսի դրութիւնը կոչում է ուղիղ աղիքի դուրս ընկնելը:

Փորի ուռչելը (մէթէօրիզմ), այսինքն գաղերի մեծ քանակութեամբ հաւաքուելը աղիքներում, որն առաջացնում է սաստիկ ցաւի զգացողութիւն փորի մէջ, նոյնպէս և ուրիշ երեոյթներ՝ որոնք առաջ են գալիս ուած աղիքների մերձակալ գործարանների ճնշումով:

Մէթէօրիզմը առաջ է գալիս աղիքների հիւանդութիւնից և կամ թէ ընտերապատից, այսինքն, այն նուրբ թաղանթից, որը պատում է փորի խորշի ներքին գործարանների մի մասը. մէթէօրիզմն առաջ է գալիս նոյնպէս ներվային համակարգութեան խանգարումից:

Դեղնախտ կոչում է մորթու և աչքի ճերմակուցքի գեղին զաֆուանալին անբնական գոյնով ներկուելը, այս երեոյթն առաջ է գալիս լեղիի կամ մաղձի բռնուելուց, այսինքն՝ երբ վերջինիս մէջ

մասը չի թափւում նախաղիքում, այլ ծծւում է արեան մէջ և այսպիսով՝ նորա գունաւոր մասը հաւաքւում է կաշուի և մաղասալին թաղանթների արանքում:

Լեղին լցուելով արեան մէջ՝ անցնում է նոյնպէս և մէզի մէջ, որի շնորհիւ և մէզը գեղնախտի ժամանակ ներկուած է լինում մութ գարեջրի գոյնով. իսկ կղկանքը՝ զրկուած լինելով լեղիից՝ փոխում է իւր գոյնը և ստանում է կաւի գոյն:

Լեղիի լեցուելն արեան մէջ՝ յաճախ առաջ է բերում զանազան ժանր հետեանքներ. մորթի քոր զալը, մարսղութեան խանդարումն, բերնի դառնահամութիւն են:

Մէզի խանդարումը կախուած է մէզի որակից և քանակից. մէզի բնական քանակութիւնը 24 ժամում լինում է հինգից մինչև տասն բաժակ. զանազան պատճառներից կարող է փոխուել. օր. միզանցքի, օրտի և երիկամունքների հիւանդութեան ժամանակ: Բոլոր տենդալին հիւանդութեանց ժամանակ՝ մէզը լինում է լնականից աւելի թանձր և մուգ:

Տենդը ոչ թէ հիւանդութիւն է՝ այլ սիմպտօմ. որը առաջանում է երբ պատահում են ուրիշ հիւանդութիւններ. սորա էութիւնը կազմում է տաքութեան սաստկութիւնը: Մինչդեռ մարմնի բնական տաքութեան սատիճանը թեատակում հասնում է 36—37 աստիճանի, տենդալին հիւանդի տաքութեան աստիճանը կարող է բարձրանալ մինչև 38, 39, 40, նոյն իսկ մինչև 42 աստիճանի:

Մարմնի տաքութեան սատիճանի բարձրանալը

երբեմն տեղի է ունենում դողալուց առաջ՝ և երբեմն միասին:

Դողն է ցրտի զղացմունքը, որը մի քանի դէպքերում շատ սաստիկ է լինում:

Տենդալին հիւանդի մորթը շոշափելիս՝ տաք է լինում և մեծ մասամբ չոր, քիչ անդամ քրտնած: Հիւանդն առհասարակ կորցնում է ախորժակը, լեզուն ծածկւում է փառով, ծարաւը սաստկանում, մէզը պակասում է, դառնում է աւելի թանձր և մուգ: Տենդի սաստկութիւնը կախուած է ինչպէս տաքութեան սատիճանից, նոյնպէս և հիւանդի հոգեկան զրութիւնից (զրգուած զրութիւն, հոգեկան ննջուած վիճակ, զիտակցութեան մթնացում, գործարանների զգացողութեան բթանումն, նոյնպէս և զառանցանք): Տենդալին հիւանդը շուտով նիհարանում է, պակասում է կշիռը, և առհասարակ նուազում է: Առհասարակ տենդը շատ լուրջ սիմպտօմ է և պահանջում է նոյնպէս և լուրջ հետազօտութիւն և ուսումնասիրութիւն:

Տաքութիւնը երբ բարձրանում է՝ պէտք է նշանակել նորա սատիճանները օրական չորս անգամ. առաւտօտեան իննին, ցերեկուայ մէկին, երեկոյեան՝ վեցին և իննին:

Աչքի անցկացնելով ալդ ցուցակը՝ կարելի է իմանալ՝ որ տաքութիւնը երբեմն մշտական է և երբեմն ընդհատուող. մշտական կոչւում՝ է, երբ բարձր սատիճանը միևնուն բարձրութեան վրայ է մնում ամբողջ հիւանդութեան ընթացքում, իսկ ընդհատուող—երբ բարձր աստիճանը միայն մի քանի ժամ է տեսում:

Տենդը երբեմն տեսում է ոչ թէ միայն մի քանի ժամ, այլ նոյն իսկ մի քանի օր, ինչպէս պատահում է տենդախտի —մալարիալի—ժամանակ:

Անգիտակից զբութիւնը և կամ գիտակցութեան թուլանումը ընդունում է ինչպէս հետեւանք զիսի ուղեղի գործունէութեան խանգարման:

Գիտակցութեան կորուսար կարող է տեղի ունենալ կամ տենդախտին զբութեան և կամ ներփակին համակարգութեան զանազան թոյներով թունարուած ժամանակ, թունաւորումը կարող է կատարուել ոչ թէ միայն արտաքուստ, այլև ներքուստ, մեր կազմուածքից, օր. օրդանիզմում բրոնուած մէզի պատճառով (ուրեմիա): Գիտակցութիւնը կորուսում է նոյնպէս ուշաթափութեան և կաթուածի ժամանակ: Գիտակցութեան կորուստ կարող է առաջ գալ և ուղեղի ծանր վերաւորման դէպքում:

Ջարժման ընդունակութեան սահմանափակումը կամ կորուստը կարող է առաջ գալ կամ՝ առհասարակ հիւանդի թուլութիւնից, կամ անգիտակից զբութիւնից և կամ՝ մեր կազմուածքի ամբողջութեան խանգարումից (ոսկրաբեկումն, կամ տեղից խախտուելը են) և կամ մեր գործարանների կրած զօրեղ զգացողութիւններից օր. լոդացաւից:

Ներփային ծանր հիւանդութիւններ նոյնպէս յաճախ առաջ են բերում շարժման ընդունակութեան կատարեալ կորուստ և կամ սահմանափակումն, ինչպէս օր, կաթուածները:

Ցաները, որոնք դուրս են զալիս մարդու մորթու վերայ, տեսակ տեսակ են: Կայ մի առան-

ժին զիտութիւն մորթու հիւանդութեան մասին (Դերմատոլոգիա) <sup>1)</sup> և մի այլ զիտութիւն սիֆիլիսի մասին: Կան ցաներ՝ որոնք դուրս են զալիս միասին: Որդէն յայտնի են որոշ ցաներ, որոնք դուրս են զալիս քութէշի, կարմրուկի—(սքարլատին) բծաւոր հարինքի, ծաղիկի և լնդագարութեան (ցինգա) ժամանակ:

Պէտք է ի նկատի ունենալ՝ որ լիշեալ բոլոր ցաները հեշտութեամբ կարելի է շփոթել այն բծերի հետ՝ որոնք առաջ են զալիս մորթու վրայ միջատների կծելուց. պէտք է ի նկատի ունենալ և բրտնքախաշը, շրմունքի վրայ տենդից առաջ եկած ցանը, և մկնատամբ (լիշայ) քթի վրայ:

Քրտնքախաշը ըստ ինքեան մի ցան է՝ որ առատ քրտինքից յետոյ երեսում է որոշ մարդկանց մորթու վրայ: Նոքա կարմրի մանր բծերով դասաւորուած են միծեանց մօտ, և զրանց մէջ երբեմն աչքի են ընկնում հաղիւ նշմարելի շրայի բշտիկներ: Երմունքների և քթի վրայի մկնատամբ յանախ առաջ է զալիս տենդային հիւանդութիւնների ժամանակ. սոքա նոյնպէս փոքրիկ բշտիկներ են և ունենում են շրային դոյն: Ալդ բշտիկները յանախ միանում են միսեանց հետ, շուտով չորանում են և նոցա տեղում գոլանում է մուգ կամ կարմրագոյն կեղեւ:

Ցաները լինում են ոչ թէ միայն մորթու

<sup>1)</sup> Տես մեր «ինչ բան է կաշու հիւանդութիւնը» և «Սիֆիլիս» գրքոյները:

վրայ՝ այլեւ մաղասալին թաղանթի, առանձնապէս՝ բերնի մաղասալին թաղանթի վրայ չոր քութէշի կամ կարմրուկի ժամանակ:

Հիւանդութեան պատճառները և վարակումն:  
Մարդը, ընդհարուելով արտաքին աշխարհի հետ,  
շատ անգամ ենթարկւում է այնպիսի պայմանների՝  
որոնք խանգարում են նորա կազմուածքի հաւասարակշռութիւնը. այսպիսի պայմանների կարգին են  
պատկանում ամենից առաջ զանազան մերենայական և չերմային (տաք և ցուրտ) ազդեցութիւնները:

Մերենայական և կամ, այսպէս ասած, կոպիտութի ազդեցութեան տակ՝ մարմնի և կամ կազմուածքի մէջ առաջ են գալիս խեղաթիւրումներ, օր, փայտով, քարով և կամ զանակով կարելի է զրկուել ձեռից, ոտից, զիսից ևն:

Իսկ չերմային ազդեցութեան՝ պատկանում են մրսելը, սառչելը, ալրուածքը, արեալին կաթուած ևն:

Աւելի շատ վնասակար ազդեցութիւն առաջ են բերում զանազան թոյներ, որոնք ընդունում են կամ դրսից, կերակուրի, օղի միջոցով, և կամ գոյանում են մարմնի ներսում, օրգանիզմի գործունէութեան խանդարման պատճառով:

Հիւանդութիւն առաջացնող զիսաւոր պատճառներից են վատ առաջապահական պայմանները և մարդու կազմուածքը ներկայացնող այդ բարդ մեքենայի մաշուելը: Ահա սոքա են այն պատճառները՝ որոնք առաջ են բերում հիւանդութիւն:

Սկսենք մանրամասն խօսել վարակման (ինֆէկցիա) մասին: Ներքին զանազան հիւանդութիւնների մէջ առանձին տեղ են գրաւում վարակիչ հիւանդու-

թիւնները: Ինֆէկցիա բառը նիշտ թարգմանութեամբ նշանակում է մի որեւէ վնասակար բանով մնուելը:

Վարակիչ հիւանդութիւնները վնասակար են այն պատճառով՝ որ հեշտութեամբ փոխւում են մէկից միւսին. և կարող են միաժամանակ վարակել որոշ տեղում գտնուած ամբողջ բազմութեան—այս գեպքում կոչվում է համաճարակ հիւանդութիւն—էպիդէմիա:

Թրանսիսցի գիտնական Պաստերի և անզիւցի վիրաբուժ Լիսաերի աշխատանքների շնորհիւ՝ այդ հիւանդութիւնների էութիւնն ու պատճառը սկսեց աստիճանաբար պարզուել իսկ այժմ՝ արդէն մեծ լուս է սփոռած այդ առաջուայ այնքան մութ ձիւղի վրայ. և այս բանին մեծ ձառայութիւն արաւ մանրազիտակը<sup>1)</sup>:

Վարակումն առաջ է գալիս այն ժամանակ՝ երբ մեր մարմնի մէջ այս կամ այն նանապարհով մուտք են գործում փոքր գործարանաւոր մարմիններ—միկրոբներ: Այդ տեղ նոքա երբեմն գտնում են նպաստաւոր պայմաններ իրանց զարգացման և բազմացման համար և այզպիսով ոչնչացնելով մեր կազմուածքի հաւասարակշռութեան համար անհրաժեշտ նիւթեր՝ առաջացնում են հիւանդութիւն, որը որոշում է իրան յատուկ սիմպոմով:

Այդ միկրօբները մեծաւ մասամբ ունենում են մի կտոր փայտի և կամ կլոր ձև և յատնուում են,

1) Ցես բժ. Արծրունու և իմ «Վարակիչ հիւանդութիւն» գրքովները:

Որպէս զի օրդանիզմը կարողանալ յաջողութեամբ կռուել իւր մէջ թափանցող անտեսանելի վարակիչ նիւթերի հետ՝ պէտք է պահպանել նորան համապատասխան շորերով թէ՛ մրսելուց և թէ՛ առհասարակ ցրտի և տաքութեան վնասակար աղդեցութիւնից. և պէտք է կռուել հէնց իրանց միկրօբների հետ:

Նախ պէտք է գիտենալ, որ հարկաւոր է խրստապահանջ մաքրութիւն այն ամենի՝ ինչ որ շըրջապատում է հիւանդին՝ և նորան խնամողներին. այս նախ մի ապահով միջոց է՝ որի պատճառով վարակումը հիւանդից չի անցնի գէպի առողջք, այս գէպում հոգ պէտք է տանել նոյնպէս և օդի մաքրութեան և փոշու առաջն առնելու. համար:

Բայց յաճախ այս միջոցներն անբաւարար լինելով՝ ստիպուած ենք այդ միկրօբների առաջն առնել նոցա ոչնչացնող նիւթերով. այսինքն, պէտք է դիմել ախտահանութեան—զեղինֆէկցիա: Պէտք է ախտահանել բնակարանը և հիւանդին շրջապատող բոլոր իրերը. նորա մէզը, խորխը, կղկղանքը, յաճախ նոյնպէս առիթ է լինում ախտահանել հիւանդին խնամողի ձեռները:

Ախտահանութեան միջոցներ շատ են առաջարկուած. մենք այստեղ կիշատակենք աւելի կարեւորներն ու գործածականները. այսպիսիներից են՝ տաքութեան բարձր աստիճանը, հարիւր աստիճանից էլ աւելի (եռացումը, գոլորշին): Փօրմալինի—գաղալին նիւթի քառասուն տոկոս շրալին խառնուրզը. թունդ սպիրալ. բլոր և բլորալին կիրը, սուլէմալի լուծուածքը (մէկ մաս սուլէմալ 1000

մաս չուր) կարբօլեան թթւուտի լուծւածքը (5 տոկոս) և այլ հասարակ ախտահանիչներ, օր, կրէօլին (մէկ թէլի գդալ մէկ բաժակ եփած չըի մէջ). բօրաթթու շրախառն կիր (հինգ մաս բացած կիրը խառնել տասն մաս չըի հետ):

Բացի այդ՝ որպէս զի համանարակը չտարածուի, պէտք է խոյս տալ այդպիսի հիւանդներին մի տեղ հաւաքելուց, իսկ վերջիններիս՝ պէտք է տեղաւորել աւելի քնզարծակ սենեակներում, որովհետեւ նեղուացք տեղում, առանց արեգակի, թարմ օդի և առատ լոյսի՝ հիւանդի զրութիւնը աւելի գէպի վատը կերթալ:

Վարակման առաջն առնելու համար դիմում են կարանտինի. այսինքն խիստ կերպով առանձնացնում են այն տեղը՝ ուր համանարակ հիւանդութիւնը արդէն կոտրած է գործում: Զնայած այսպիսի նախազգուշացնող միջոցների, եթէ առողջ մարդը այնուամենայնիւ հիւանդանայ՝ այն ժամանակ պէտք է հոգս տանել բժշկելու համար, որն արդէն բժշկի գործն է:

Բժշկականութեան հայր անձան չիպպոկրատ ասում էր՝ թէ հիւանդին բժշկում է ինքը բնութիւնը, իսկ բժիշկը՝ մենակ խնամում է հիւանդին և օգնում բնութեան: Այս կարծիքը միանգամայն արգարացի է ներկայ ժամանակում, և մենք կաւելացնենք, հիւանդութեան ժամանակ արագ հասնող օգնութիւնն ունենում է աւելի մեծ նշանակութիւն, քան ուշ բժշկելը:

Ահա թէ ինչո՞ւ համար շուտով օգնութեան հասնելու խնդիրը անհրաժեշտ պէտք է լինի թէ՛

տանը և թէ մանաւանդ պատերազմի դաշտում, ուր դու որպէս զինուոր շատ անգամ կզգաս կարիքն այդ օգնութեան. Քո սեփական միջոցներով կարող ես քեզ օգնել, բայց այն պայմանով՝ երբ դու առաջուց ծանօթ ես ժամտնակակից գիտութեան գէթ ամենատարրական մասի հետ:

**ՅԱՆԿՈՐԾԱԿՈՆ ՀԻՒԾՆԴՈՒԹԻՒՆ ԵՒ ՍԿԶԲՆԱԿՈՆ ՕԳՆՈՒԹԻՒՆԸ ՄԻՆՉԵՒ ԲԺՇԿԻ ԳԱԼԻ.**

Յանկարծական հիւանդութիւնները, ըստ երեւոյթին, կատարեալ առողջութեան ժամանակ պատահում են մարդուն անսպասելի կերպով:

Ամենաօրհասական և յանկարծակի հիւանդութիւնը, որը ոչ մի տեսանելի պատճառի հետ կապուած չի երեւում, և որի հետևոնքը լինում է մահ՝ այդ սրտի կաթուածն է:

Սրտի կաթուածը, որպէս յանկարծական և ինքնուրոյն հիւանդութիւն, միշտ ունենում է իւր թագնուած պատճառները, օր, սրտի մասերի մաշուկը, ներվերի հիւանդութիւնը, որոնք անտեսանելի և դանդաղ կերով պատրաստում են ծանր օրհասական զրութիւնը՝ մահը:

Մահ՝ ըստ ինքեան դադարումն է՝ բոլոր կենսական զորմօնների և համարեա միշտ վրայ է դալիս կամ սրտի կամ թոքերի և կամ ուղեղի միշնորդութեամբ:

Մահուան նախորդում է տագնապը—ազօնիա. այսինքն այն կոիւր՝ որ օրդանիզմը աղատւելու համար մղում է մահուան դէմ. սա սկսած մի քանի

վայրկեանից երբեմն տեսում է մինչեւ մի քանի ժամ:

Տագնապը զիխաւորապէս արտայալտվում է դէմքի առանձին տիպարով, որը կոչում է «հիպապոկրատի դիմակ»՝ նոյնպէս զիխակցութեան թուլութեամբ կամ կատարեալ կորուստով և խոխուցող շնչառութեամբ. որն առաջ է գալիս շնչառութեան խողովակների հեղուկով լեցուած լինելու պատճառով:

Տագնապը երբեմն շատ տանջում է հիւանդին, մանաւանդ՝ երբ զիխակցութիւնը զեռ պահպանւած է որոշ չափով. այդ արդէն բժշկի գործն է թեթևացնել մեռնողի զրութիւնը:

Որոշելու համար՝ թէ արդեօք մեռան հիւանդը, և կամ նորա ըստ երեւոյթին մահը կեղծ չէ. դիմում են մի քանի փորձերի. այսպէս օրինակ, փետուրով գուզուում են բթածակերը, բերնին մօտեցնում են հայելի, զմուռս են կաթեցնում մարմնի վրայ. ականջ են դնում սրտի մօտերքը և լսում, թէ արդեօք բաբախում է սիրտը թէ ոչ, պինդ կապում են մատը ևն:

Հիւանդի անշնչանալուց 8—12 ժամ ւետոյ՝ նորա մարմնի փայտանալը և մեծ կապոյտ-կարմրագոյն բծերի յայտնուելը արդէն կասկածի տեղիք չեն տալիս. Սապա յաջորդում է փտումը և զիխակն սկսում է հոտել, մորթը դառնում է կանաչաղոյն և փորն սկսում է ուռչիլ դագերից:

Մակալն պէտք է ի նկատի առնել՝ որ այլ դէպքում այս երեւոյթները ուշ են յայտնուում և այս հանդամանքը չպէտք է շփոթէ մեռնողի շրբ-

չապատողներին՝ եթէ կան մահուան ուրիշ նշաններ: Այսպէս կոչուող կեղծ մահ—լէթարգեան քունը, անկարելի է շփոթել իսկական մահուան հետ, այս մասին եղած զրոյցները բոլորը մեծաւ մասամբ անհիմն են և ֆանտազիայի ժնունդ:

Նատ ուրիշ յանկարծական հիւանդութիւններ ևս հեշտութեամբ կարող են ունենալ նոյնպիսի օրիասական վախճան՝ եթէ իւր ժամանակին օգնութեան չհասնուի: Այդ պատճառով և գէթ ընդհանուր կերպով ձանօթութիւնն այդպիսի հիւանդութիւնների հետ՝ անհրաժեշտ է բոլորիս համար:

Ուշագնացութիւնն. ծանր ուշագնացութեան ժամանակ՝ գիտակցութիւնը կորսում է, կաշին, առանձնապէս գէմքի մասում, դեղնանում է, շնչառութիւնը կատարում է թոյլ և անկանոն կերպով, թուլանում է զգալի չափով սրտի գործունէութիւնը. երբեմն տեղի են ունենում նոյնպէս փսխումն և սառն քրտինք:

Ուշաթափութեան էութիւնը կազմում է թարձարիւնի յանկարծակի կերպով նուազ չափով հոսելը դէպի ուղեղը, որը կատարում է կամ արեան մեծ քանակութեան կորուստից և կամ սրտի գործունէութեան յանկարծակի թուլութիւնից: Ուշաթափութիւնը հեշտութեամբ պատահում է սակաւարիւն, ներփային<sup>1)</sup> և մի որևէ ծանր հիւանդութիւնից նոր վերկացող անձի հետ. առաջ է զալիս նոյնպէս ծանր, անմաքուր օդից. կրծքի վանդակի սեղմուելուց, և յանկարծական հոգեկան ցնցումից:

Սուաշին օգնութիւնը պէտք է լինի՝ հիւանդին պառկեցնել կոնակի վրայ, առանց բարձ զնելու գրլիսի տակ, միւնոյն ժամանակ և անհրաժեշտ է թուլացնել սեղմած շորերը և ըթին մօտեցնել ձեռքը՝ որի վրայ կաթեցրած լինի անուշաղը ոգի. իսկ օդի թարմութեան համար՝ պէտք է բաց անել լուսամուտը և երեսն ու կուրծքը սրսկել սառն ջրով:

Երբ հիւանդի գիտակցութիւնը տեղը կդայ, կարեոր է նորան երկար ժամանակ պահել նոյն պառկած դրութեան մէջ. իսկ սրտի գործունէութեան որոշ չափով կանոնաւորման համար՝ տալ նորան օի գդալ դինի կամ տասն և հինգից մինչեւ քսան վալերեան կաթիլ մէկ գդալ կամ րիւծկայ ջրի մէջ:

Կաթուած—ապօպլեկսիա. սորա ժամանակ գիտակցութիւնը մթնանում է և շնչառութիւնը լինում է խոպոտ: Այս երկոյթներին միանում է սովորաբար և գէմքի կարմրութիւնը:

Երբ հարուածի ժամանակ գիտակցութիւնը մթնանում է ոչ բոլորովին և կամ սկսում է տեղը գալ՝ այդպիսի հիւանդի վրայ նկատում են անդամալուծութեան նշաններ. նորա հիւանդութիւնը կարելի է նկատել մարմնի աչ կամ ծախ կողմի վրայ. խօսակցութիւնը լինում է դժուար և անհասկանալի, յաճախ նաև մէզի և կղկղանքի ակամայ վիժումն:

Այդ հիւանդութիւնն առաջ է զալիս ուղեղի մի որևէ անօթի ճայթումից, երբ արիւնը լցուելով ուղեղը՝ ճնշում է նորա վերայ և առաջ է բե-

<sup>1)</sup> Տես իմ «Մեր նիարդելը» գրքուկը:

րում նորա այս կամ այն մասի գործունէութեան  
բնդհատումն:

Օգնութեան դէպքում պէտք է հիւանդին կէս  
նստած և կէս պառկած դրութեան մէջ պահել.  
զլխին պէտք է դնել սառցով փամփուշտ և յետոյ  
ծոծրակի ու սրունքների վրայ դնել մանանեխի սպե-  
զանի—դօրչինիկ: Բացի այս՝ եթէ կարելի է տալ  
հիւանդին մի բաժակ չըի մէջ մի դդալ անդիմական  
կամ զլառուբէրեան աղ և սրտին դնել դրեխ (օքնա):

Կաթուածի հետ մօտ նմանութիւն ունի և  
համարեա նոյն երեսյթն է ներկայացնում՝ արեան վե-  
րապարձի խանգարումը դէպի ուղեղը, որն առաջա-  
նում է ուղեղի այս կամ այն անօթի խցուելուց:

Վերնոտութիւն—էպիլէպսիա.<sup>1)</sup> տեղի է ու-  
նենում սովորաբար գարձեալ յանկարծակի, որի ժա-  
մանակ գիտակցութիւն բոլորովին չի լինում. մար-  
դու դէմքն ստանում է կապոյտ ծիրանի գոյն,  
շնչառութիւնը լինում է անկանոն, սպիտակ կամ  
արիւնախառն փրփուր է հոսում բերանից և ցըն-  
ցւում է ամբողջ մարմինը:

Թալկութիւն—իստէրիա, երեմն նման է լի-  
նում վերնոտութեան. այս դէպքում ևս խնամքի  
ժամանակ՝ հիւանդին պէտք է հանգիստ թողնել:  
Այս հիւանդութեան ժամանակ մասամբ գիտակ-  
ցութիւնը մթնանում է, դէմքին նկատում է ծի-  
ժաղ, որը փոխանակում է լացին և աղաղակին: Վեր-  
ջին դէպքում երեսի կարմիր գոյնը չի անհետանում,

շնչառութիւնը լինում է անկանոն և մկանունքներն  
սկսում են զնցուել<sup>1)</sup>:

Խէթ կամ փորի կտրատիլը—կօլիկա—տեղի  
է ունենում յանկարծակի վրայ հասնող փորի սուր  
ցաւից և ուռչելուց—մեթեօրիզմ:

Խէթը լինում է. Ա.) աղիքային խէթ, որը առա-  
ջանում է կամ վատ կերակուրներից, որոնք գրզ-  
ուում են աղիքների մաղասային թաղանթը և կամ  
հաւաքուած գազերի մէծ քանակութիւնից:

Բ.) Լիարգային խէթ, որի պատճառն է մաղ-  
ձալին քարի անցնելը:

Գ.) Երիկամունքների խէթ, որի պատճառն է  
երիկամունքների բարի մէղի ճանապարհով անցնելը:

Խէթի առաջին օդնութիւնն է տրեխ և  
տաք փաթէթներ դնելը փորի վրայ. լաւ է նոյն-  
պէս քսան և ուժ աստիճան տաք փաննան, տասից  
մինչև տասն և հինգ րոպէ, որը բժիշկը նշանակում  
է, դորա համար չուրը պէտք է տաքացնել մինչեւ  
բժշկի դալը:

Արևահարութիւն, տեղի է ունենում այն ժա-  
մանակ՝ երբ արեգակի ալրող ճառագայթները ան-  
միջապէս ընկնում են մարդու զլխի և զգի վրայ:  
Արևահարութեան թեթև դէպքերում՝ պատահում է  
երեսի կարմրութիւն, զլխի ցաւ, մարմնի ընդհա-  
նուր յոգնամծութիւն, գիտակցութեան թուլութիւն  
և շնչառութեան խանգարումն, մորթու վրայ ևս  
երբեմն նկատում են ալրուածքներ: Իսկ ժանր դէպ-

<sup>1)</sup> Տես իմ «Ուղեղի սիֆիլիս» գիրքը.

1) Տես իմ «Ուղեղի սիֆիլիս» գիրքը.

բերում՝ նկատում է երեսի գունատումն, դիտակցութեան բացակայութիւն և ցնցումներ:

Որպէս առաջին օգնութիւն՝ հիւանդին պէտք է դնել զով տեղ և վրան սրսկել սառն չուր կամ սառուցէ փամփուշտներ դնել զիսին. նոյնպէս և խցնել երկու երեք բաժակ զինեխառն սառն չուր:

Խեղդուել. երբ խեղդուածին շրից դուրս են հանում՝ նորա դիտակցութիւնը կատարելապէս բացակայում է, նկատում է դէմքի վրայ գունատութիւն և կամ կապտութիւն, շնչառութիւնը լինում է թուլ և ընդհատուղ:

Խեղդուածին առաջին օգնութեան համար բերանը և որկորը նախ պէտք է մաքրել լորձունքից, ցեխից և կամ տւազից, թաշկինակով փաթաթած ցուցամատը մտցնելով կոկորդը. մինչեւ մէջը հանել շորերը և մարմնի ցածի մասը և ոտքերը բարձրացնել: Ապա խեղդուածի թիկունքի տակ պէտք է դնել մի պինդ բան և ծեռնարկել առաջ բերելու արհեստական շնչառութիւն. միևնոն ժամանակ անհրաժեշտ է և շփել մորթին խոզանակով, մահուղով և կամ լոկ ծեռքով, այս գործողութիւնը մի ժամ պիտի շարունակել:

Սյս միջոցները գործ դնելուց յետոյ եթէ արդէն սկսում է գիտակցութիւնը վրան գալ՝ նորան պէտք է տալ մի ումազ զինի և կամ տասնհինդից բսան վալերեան կաթիլ և սկսել տաքայնել նորան:

Արհեստական շնչառութիւնը առհասարակ հետեւեալ կերպով են առաջ բերում: Թիկունքի տակ դնում են մի կարծր բան, հիւանդին պառկեցնում են կոնակի վրայ, դուրս են բաշում լեզուն և չո-

բելով գլխի վերելը՝ բռնում են արձունկներից և այնպէս են շարժում՝ որ ծեռները հասնեն մինչեւ զլխի երկու կողմերը (Զե 8): Այդպիսի շարժման շնորհիւ՝



Զե 8.

կրծքի վանդակը լայնանում է և արագանում է արհեստական ներշնչումն, ապա՝ կամաց կերպով ետ կրերեն գէպի կրծքի վանդակը, որի ժամանակ՝ կրծքի վանդակը նեղանում է և ստացւում է արհեստական արտաշնչումը (Զե 9): Միշին չափով իւրաքանչիւր



Զե 9.

շարժումն ու դադարը պիտի տեէ մէկից մինչեւ երկու վալրկեան:

Թունաւորումը կատարւում է՝ եթէ մարդու ներսը թափանցում են դորեղ թոյներ և այնտեղ առաջ են բերում ծանր փոփոխութիւններ:

Ամենալաճախ պատահող թոյներից մէկը՝ ոգելից խմբչներն են: Իւրաքանչիւր օր, թէկ քիչ բանակութեամբ, ընդունելով ոգելից խմբչներ՝ այնուամենախնիւ օրգանիզմի կանոնաւոր գործունէութիւնը խանդարուում է. իսկ մեծ քանակութեամբ ընդունելն արդէն առաջ է բերում թունաւորման ծանր դէպքեր—գիտակցութիւնը կորչում է, դէմքը գժգունանում է, շնչառութիւնը դառնում է անկանոն, աչքի բիբերը լայնանում են և մորթու վրայ լինում է մածուցիկ սառն քրտինք:

Սուազին օգնութեան համար՝ պէտք է մարմինը սառն չրով լուանալ և տրորել, զլխին դնել սառուց, իսկ երբեմն, անկանոն շնչառութեան ժամանակ, պէտք է դիմել արհեստականին: Երբ հիւանդի ուշքը վրան է լինում՝ պէտք է տալ տասից տասնոհինդ կաթիլ անուշաղը ողի:

Յաճախ մարդ թունաւորում է վառարանի հոտից, որը առաջ է գալիս ածուխի թերի վառուելուց գրյացած դագերից. այդ տեսակ զազը հեշտութեամբ կարելի է նկատել այն կապտագոյն բոցերից որոնք ածուխից առաջ են զալիս, երբ զեռ ածուխը բոլորովին չի բորբոքած:

Վառարանի զազով կարելի է աննկատելի կերպով թունաւորուել, որովհետեւ մաքուր ունենում է թեթե հոտ: Թոյլ թունաւորման ժամանակ զգացւում է զլխի ծանրութիւն, սկսում է մարդ փրսխել, թուլանում են նոյնպէս և մկանունքները: Աւելի ծանր թունաւորման դէպքերում նկատում է գիտակցութեան կորուստ, ծանր շնչառութիւն, դէմքի դժգունութիւն կամ կապտութիւն (ցիտնօս):

Երբեմն նկատում է նաև մարմնի ցնցումն և կաթուածային երկոյթներ: Սուազին օգնութիւնը մեծ քանակութեամբ մաքուր օդ մատակարարելն է. լուսամուտը բաց անել, կամ կոտրել ապակիները. ապա սրսկել մարմինը սառն չրով, առաջ բերել արհեստական շնչառութիւն, օգտակար է նոյնպէս դրեխ դնել երկու բաժակ սև սուրճից: Բացի այս թոյներից՝ թունաւորում են նոյնպէս ֆոսփորից և մկնդեղից: Ֆոսփորի թունաւորման ժամանակ՝ մարդ լզգում է սաստիկ փորացաւութիւն և խիստ ծարաւ, փորն սկսում է լուծել, շատ յաճախ նոյնպէս փսխում է, որից և ֆոսփորի հոտ է գալիս: (սրիտորի հոտ):

Բժիշկներն այս դէպքում լուանում են հիւանդի ստամոքսը. տալիս են բեեկն (սկիպիդար), իսկ սաստիկ փսխման դէպքում պէտք է հիւանդը կուլ տայ սառցէ փորքիկ կատրներ: Այս դէպքում հիւանդին չպէտք է տալ կաթ և այլ իւղեղներ: Մկնդեղով թունաւորման ժամանակ փորում զգացւում է սաստիկ ցաւ և կոկորդում նանկրտումն, պատահում է՝ որ հիւանդն սկսում է զառանցել և ցնցուել ամբողջ մարմնով, փսխում է և փորն բսկում է լուծել:

Օգնութեան համար՝ պէտք է արհեստական փսխումն առաջ բերել, պէտք է տալ նոյնպէս մի երկու բաժակ տաք չուր ու նոյնպէս և կաթ՝ ձուի ներմակուցի հետ: Կայ և մի առանձին գեղ, որը կոչւում է ընդհանուր անով «մկնդեղի դէմ դեղ» նորանից տասն րոպէ մի անգամ հացի գդալով

պիտ տալ. հեռու պիտ պահել թունաւորուածին թթու խմիչքներից:

Առհասարակ թունաւորուածին օգնելու համար նախ պէտք է իմանալ՝ թէ ի՞նչ թոյնով է թունաւորուած, որովհետև ուրիշ շատ զանազան երերից էլ կարելի է թունաւորուել, ինչպէս օրինակ պղնձում եփուած կերակուրներից կամ նոյն իսկ թէլից ևն ևն:

Վ.Ո.Ր.Ա.ԿԻՉ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ.

Բացի քիմիական թոյներից՝ կարող են թափանցել մեր մարմինը որպէս թոյն՝ փոքրիկ օրդանական մարմիններ, որոնցից և առաջանում է վարակումը—ինչպէկցիա:

Այս դէպքում հիւանդութիւնը զարգանում է աստիճանաբար: Համարեա բոլոր վարակիչ հիւան դութիւններն սկսում են տենդով և վարակում են մի քանի գործարանները միասին:

Շատ տեսակ վարակիչ հիւանդութիւններ կան, մենք ի նկատի կունենանք այստեղ միայն հետևեալները:

Հարինքներ-տիֆ. փորահարինք, դարձահարինք, վարդահարինք (բժաւոր հարինք), Խոլերա, արիւնալուծութիւն, ծաղիկ, դողկրոցք—մալարիա, թոքերի բորբոքումն, բարակացաւ, յօդացաւ և լրդացաւութիւն—ցինգա.

Ի միջի ալլոց, այս հիւանդութիւնները յաճախ պատահում են պատերազմների ժամանակ. և դու որպէս զինուոր մի և նոյն ժամանակ և որպէս քո-

ղաքացի պարտական ես այս բոլորի մասին եթէ ոչ ընդարձակ՝ զոնէ տարրական ծանօթութիւն ունենալու. որովհետև ինչքան մարդ շատ բան գիտենալ՝ այնքան աւելի լաւ է:

Փ Ո Ր Ա. Հ Ա. Բ Ի Ն Ք.

Փորահարինքը առաջ է գալիս ախիքի միկրոբներից, որոնք մանելով բարակ աղիքի մէջ՝ այնտեղ վէրքեր են առաջացնում, որով և հիւանդի կրղկրանքը գառնում է վարակիչ: Եւ ահա այս վարակուած կղկղանքի միջոցով է որ հիւանդութիւնը անցնում է մէկից միւսին: Այս պատճառով որպէս նախազգուշացման միջոց պէտք է արտաքնոցի փոսի պատերն այնպէս շինել՝ որ միջից ոչինչ դուրս չըդայ և չժծուի գետնի մէջ. նոյնպէս և ըրհորները չպէտք է արտաքնոցին մոտիկ լինեն և ոչ էլ նոցանից խօր:

Աղիքների վէրքերի զարգանալը և տենդը առաջ են բերում փոփոխութիւններ և միւս զործարաններում, օր. փալճաղում, լերգում, սրտում, երիկամունքներում, մկանունքներում, նոյնպէս և ներվալին համակարգութեան մէջ:

Վարակիչ նիւթի ներգործութիւնից երկու երեք շաբաթ յետոյ՝ սկսում են հետզհետէ զարգանալ և հիւանդութեան աստիկները, որոնցից զիսաւորն է տենդալին զրութիւնը, որն աստիճանաբար աճելով՝ մի քանի ժամանակ մնում է բարձր աստիճանի վրայ և իշնում է հետզհետէ եթէ տենդը արգէն սկսում է վերջանալ: Յատուկ են այս հի-

ւանդութեան նոյնպէս շնչառութեան արագացում։ Ժարաւի սաստկացում, մէզի պակասութիւն, լեզուի փառով ծածկուելը, դիասկցութեան մթնանումը և սաստիկ թուլութիւն։ Հիւանդութեան երկրորդ շաբաթուայ վերջը փորի վրայ յայտնուում են փոքրիկ կարմիր բծեր (ոօգէօլա) որոնք իրանց արտաքին տեսքով յիշեցնում են մոծակների խայթուաժըր։ այս բծերը հիւանդութեան ընթացքում կարող են լինել նոյնպէս կռնակի և կրծքի վրայ և հիւանդութեան ընթացքում մի քանի անգամ յայտնուել և դարձեալ անհետանալ։

Փորհարինքի ժամանակ նոյնպէս սկսում է ուռչել փորը. առաջի օրերում փորը կապւում է, յետոյ սկսում է լուծել շրային և սիսեռի նման գեղնագոյն աղբ։

Փորհարինքի ժամանակ առաջ են դալիս բարդութիւններ, օր. բրօնխիտ, այսինքն հազ՝ և խորիի սաստկացում, լինում է և լարինգիտ, այսինքն հազ՝ և խռապոտ ծայն, պատահում է նոյնպէս աղիքներից արիւնահոսութիւն։ Երբեմն վերքերից ծակւում են աղիքները, և լինում է պերիտոնիտ, այսինքն աղիքների բովանդակութիւնը դուրս է ընկնում ընդերապատի խոռոշը և այս զրութիւնը շատ վրանգաւոր է։

Փորհարինքի ժամանակ՝ կարող է լինել պակելախոց, այսինքն մորթու որոշ մասերի փրտումն, որը պատահում է սովորաբար գաւակում. այս փտած մասերը երբեմն դառնում են խոր վերքեր։ Պառկելախոցն սկսում է մորթու կարմրելով։

Միւս բարդութիւններից մատնացոյց կանենք՝ ականջի գեղձի թարախով բորբոքուելը, որն արտայայտում է ականջի ետեր մեծ ցաւեցնող ուռուցքով. վերջապէս մատնացոյց կանենք դարձեալ մի այլ բարդութեան, այդ՝ ականջի թարախով բորբոքուելն է. որի ժամանակ ականջը սաստիկ ցաւում է և այդտեղից սկսում է հոսել թարախ։

Փորհարինքով հիւանդին պէտք է լուրջ խնամք և հոգացողութիւն. այս հանգամանքից և կենցաղի դրութիւնից է կախուած զիսաւորապէս նորա բժըշկութիւնը։ Տաքութեան աստիճանը եթէ շատ բարձր է՝ իշեցնելու համար նշանակում են վաննա. փորի վրայ գնում են սառն և տաք փաթեթներ, զիսին սառոց. տալիս են նոյնպէս քիչ զինի և վալերեան կաթիլներ, նշանակում են զրեխներ ևն։

Հիւանդի կերակրում հարկաւոր է պահեցողութիւն, դիէտա, սննդարար, դիւրամարս, զիսաւորապէս հեղուկ կերակուրներ, օր. եփած կաթ, մրսաշուր, իսկ կոշտ կերակուրներին զգուշութեամբ պէտք է անցնել և պէտք է կերակրել հիւանդի սուոզութեան համեմատ։ Ընդհանրապէս պէտք է կերակրել շուտ շուտ և քիչ քիչ։

Որպէս զի հիւանդը չստանայ պառկելախոց՝ պէտք է ուղղել տակի սաւանը. փոփոխել հիւանդի դիրքը և կանֆօրնի սպիրտով որբել մորթու կարմրեած տեղերը։

Եթէ բժիշկը խորհուրդ է տալիս տաքութիւնն իշեցնելու համար վաննա գնել հիւանդին, բայց նրկատում է՝ որ աղիքներից դեռ արիւն է գալիս։

վաննա այլես չպէտք է դնել, այլ փամփուշտով սարոց պէտք է դնել փորի վրայ:

Անպայման պէտք է խստիւ կատարել բժշկի պատուէրները. չմոռանալ նոյնպէս ախտահանութեան անհրաժեշտութիւնը, օդի մաքրութեան և արեգակի ճառագայթների մասին:

### Դ Ա. Բ Զ Ա. Հ Ա. Բ Ի Ն Ք.

Դարձահարինը առաջ է գալիս մեր օրդանիդ մում որոշ բակտերեաների—սպիրօխէտի մտնելուց, որը խոշորացուցով նկատելի է լինում արեան կաթիլի մէջ:

Այդպէս ուրեմն այդ հիւանդութեան վարակիչ հիւթը դտնուելով արեան մէջ՝ հեշտութեամբ փոխուում է մէկից միւսին և այս փոփոխութիւնը կատարուում է շատ յաճախ զանազան միջատների միջոցով, օր. լու, մլուկ ևն, որոնք առաջ կծելով հիւանդին՝ և նրանից վարակուելով՝ վարակում են առողջին:

Հինգ վեց օր հիւանդն իրան թոյլ է զգում, տրամադրութիւնը լինում է վատ. ապա՝ սկսում է հիւանդութիւնը յանկարծակի կերպով ցնցող սարսուռով՝ տաքութիւնն սկսում է արագ բարձրանալ, և հինգ վեց օր մնում է նոյն բարձր աստիճանի վրայ և յետոյ արագ կերպով ցածրանում է, այսինքն՝ վրայ է հասնում կրիզիսը, հինգից մինչեւ ութիւն օր շարունակում են անշերմ օրերը, որից յետոյ՝ դարձեալ սաստիկ բարձրանում է հիւանդի տաքութիւնը և վերջանում է դարձեալ կրիզիսով.

այսպէս կարող է մի քանի անգամ կրկնուել, որի պատճառով և հիւանդութիւնը կոչւում է դարձահարինք:

Այդ հիւանդութեան բակտերեաները—սպիրօխէտ, միայն հիւանդութեան բռնուելու ժամանակ են արեան մէջ շրջան զործում. իսկ եթէ արդէն տաքութիւն չկայ, նոքա անհետանում են:

Հիւանդութիւնն սկսուելիս՝ հիւանդն ունենում է դող, ծարաւ, ջերմութիւն, լեզուն ծածկում է փառով, մի քանի օրից յետոյ՝ նա սկսում է քրտնել և տաքութիւնն էլ սկսում է իշնել:

Առողջանալը լինում է կատարեալ դանդաղ, բարդութիւնները յաճախ տեղի են ունենում դեղնախտի ձեռվ, այսինքն՝ եթէ լեզին չի կարող թափուել լերգից նախաղիքի մէջ, այլ արեան մէջ է ծծւում:

Բժշկական միջոցներն ու խնամքը նոյնն են՝ ինչ որ փորհարինքի ժամանակ, միայն այս դէպքում փալքէզը—դիէտան—այնքան խիստ չպիտի լինի՝ ինչպէս փորհարինքի ժամանակ. որովհետեւ այս դէպքում՝ աղիքները խոցեր չեն ունենում:

Վարդահարինքը համահարակ է, և միւս բոլոր հարինքներից աւելի սաստիկ. սորա թունաւոր նիւթի էութիւնը և վարակման տարածուելու եղանակը՝ գեռ ևս լաւ պարզաբանուած չէ,<sup>1)</sup>

Սակայն անկասկած է՝ որ վարդահարինքով վարակուելը հեշտութեամբ առաջ է գալիս անձնական յարաբերութիւններից և հիւանդի հետ ունե-

<sup>1)</sup> Տես իմ «Թուղուլք Ակրիսով» գիրքը.

յած շփումից: Այս պատճառով՝ հիւանդին պէտք է խիստ կերպով առանձնացել թէ՛ միւս հիւանդներից և թէ՛ առողջներից:

Վարդահարինքի տարածման համար՝ գլխաւոր պատճառ են հանդիսանում վատ առողջապահական պայմանները, միւս հարինքների նման՝ վարդահարինքն էլ յաճախ պատահում է պատերազմների ժամանակ:

Հիւանդութիւնից երեք օր, նոյն իսկ երեք շաբաթ առաջ (ինկուբացիա) լինում է շերմ, դող, գլխացաւ, թուրութիւն, ապա յանկարծակի սկսում է հիւանդութիւնը ցնցող սարսուռով և տաքութեան բարձր աստիճանով, որը ծօտ երկու-երեք շաբաթ մնում է նոյն բարձրութեան վրայ և յետոյ վերջանում է կրիզիսով:

Հիւանդութեան երրորդ կամ չորրորդ օրերում՝ մորթու վրայ դուրս են գալիս կարմիր բըծեր—ուզէօլա. որոնք նման են փորհարինքի բծերին, այն տարբերութեամբ՝ որ առաջինները աւելի բազմաթիւ են և աւելի կարմիր և հետզհետէ փոխում են կապոլտ գոխի, կարող են դոքա նոյնպէս միանալ միմեանց հետ:

Երկուսից չորս օր յետոյ՝ այդ կարմիր բծերը փոխում են այսպէս ասած պէտէխիալի. այսինքն՝ բծերն աւելի մութ կարմրագոյն են դառնում և չեն անհետանում ուզէօլայի նման՝ երբ մատով սկսում ենք սիխութ: Սլդպիսի բծերի թիւը ամբողջ մարմնի վրայ կարող է հազարից անցնել, երբեմն դոքա միանում են միմեանց հետ և կազմում են մի մեծ բիծ: Հիւանդութեան երկորդ շաբաթուայ վերջ՝

բծերը գեղնանում են և սկսում են անհետանալ, ապա մորթըն սկսում է թեփով ծածկուել. այդ թեփը սաստիկ վարակիչ է: Այսաեղ տիֆով հիւանդի դրութիւնը և ներվային համակարգութեան վնասումը շատ խիստ է արտայայտում:

Բրօնխիտն էլ այդ վարդահարինքի ժամանակ շատ յաճախ է տեղի ունենում, քան միւս հարինքների ժամանակ:

Մեծ նշանակութիւն ունի վարդահարինքի ժամանակ պրօֆիլակտիկան: Մահր վարդահարինքի ժամանակ աւելի յաճախ է պատահում քան միւս հարինքների:

Բժշկութիւնն ու խնամքը նոյնն են ինչ որ փորհարինքի ժամանակ, չպէտք է մոռանալ՝ որ այս հիւանդութիւնը սաստիկ վարակիչ է, և հիւանդին պէտք է խիստ կերպով կղզիացնել:

Անկասկած՝ երբ մեր գիւղերում կազմակերպութիմսավոն, և ունենանք սրտացաւ բժիշկ, հայրախնամ քահանայի, երկդասեան վարժարան, զրադարան, հիւանդանոց, և գիւղական թերթ՝ այն ժամանակ վարդահարինքը կը վերջանայ մէշտեղից:

### ԴՈՂԵՐՈՑՔ—ՄԱԼԱՐԻԱ.

Դողերոցքը առաջ է գալիս մեր արեան մէջ որոշ միկրոբների մուտք գործելուց, որոնք պլազմօդիս են կոչւում: Թէ ինչպէս են նոքա ընթնում արեան մէջ՝ այդ մասին գեռ գիտնական վէճը շարունակում է, սակայն այսքանն արդէն պարզ է՝ որ այդ միկրոբները վարդանալով չըում և հողում՝

անցնում են մեր արեան մէջ միջատների կծելուց, գլխաւորապէս որոշ տեսակի մոժակների կծելուց: Թոյնը զարգանում է հահճալին տեղերում. պատճառ լինում են խոնաւութիւնը, մթութիւնը և կանաչը:

Համարեա բոլոր բժիշկները հաւատացնում են՝ որ տարուայ ցուրտ ժամանակը— ձմեռը թէև հահճալին տեղերը մնում են՝ բայց այդ հիւանդութիւնն առաջ չի դալիս:

Մալարիալի միկրոբները մտնելով մեր արեան մէջ՝ մէկից մինչև երեք շաբաթ թաքնուած դրութեան մէջ են մնում— ինկուբացիա. ապա օրդանիզմում առաջ են բերում մի շաբաթ խանգարումներ, որոնք արտայալուում են սովորաբար հետեւեալ աստիկներով. յանկարծակի վրայ համնող սարսուռ, տաքութեան աստիճանի արագ բարձրացում, որը նոյն բարձր դրութեան վրայ մնում է միքանի ժամ, ապա տեղի է տալիս կրիզիսին, սաստիկ քրափնք և դարձեալ սարսուռ և այսպէս շարունակ:

Հիւանդութեան այս կերպ յայտնուելը, տաքութեան կանոնաւոր աստիճանի փոփոխութիւնը, և լաւ տրամադրութիւնը, կարող են պատահել ամեն օր, օրը մէջ, կամ երկու օրը մի անգամ են. սովորաբար այս երեսիթներն ամեն անգամ յայտնուում են միենոյն ժամերում, որի պատճառով մալարիան հասարակ ժողովուրդն էլ հեշտութեամբ կարող է ձանաչիլ:

Մալարիալի ժամանակ միշտ մէծանում է փայծաղը, նա դանւում է փորի ծախ կողմը, կողքե-

րից ցած. հիւանդը նիհարանում է և գժղունանում:

Մալարիալի երեսիթները շատ զանազան են, օր՝ որոշ ժամերում սկսում են ցաւել մէկ կամ երկու ատամը միասին: Մալարիալի դէմ ամենազօրեղ միջոցն է քինաքինան, որը պիտ ընդունել հիւանդութիւնն սկսելուց չորս ժամ առաջ. հիւանդութեան սկսուելը կոչվում է պարօքսիզմ:

Մալարիալից խոյս տալու համար պէտք է խոյս տալ ըստ կարելուն հահճալին տեղերից. հակառակ գէպքում պէտք է այդ տեղերը չորացնել և կռուել մոժակների դէմ. օր, լուսամուտները պատել ցանցով, հագնել ծեռնոցներ, հահճալին տեղերում չպառկել և որպէս նախազգուշացման միջոց սուրճ խմել, ամեն օր միաժամանակ կարելի է ընդունել փոքրիկ քանակութեամբ քինաքինա:

Մալարիան յաճախ կրկնուում է և առաջ է բերում մալարիալի նիհարութիւն, որը արտայարտւում է սակաւարիւնութեամբ, փայծաղի և լերզի մէծանալով, և միւս գործարանների գանազան փոփոխութիւներ կրելով:

Սակաւարիւնութեան դէմ սովորաբար հիւանդին նշանակում են մկնդեղ, երկաթ, իօդ, ելեկտրականութիւն:

Երբեմն մալարիան յայտնուում է արեան մէջ պլազմօդիա մտնելուց երկար ժամանակ անցնելուց յետով, և պատահում է նոյնպէս՝ եթէ մարդ վաղուց է թողել տենդալին տեղերը. այսպիսի մարդու հետ մի ուրիշ տենդալին հիւանդութեան ժամանակ անսպասելի կերպով յայտնուում են մալա-

բիալի երևոյթները. որոնք ազօտացնում են հիմնական հիւանդութեան բնաւորութիւնը, այսպէս օրինակ մալարեան կարող է միանալ տիֆ'րի հետ: Կրկնում ենք որ ամենազլխաւոր գերը խաղում է ծահճալին գեղերի չորացնելը: Աւելորդ չէ լիշել՝ մեր խեղճ հայաստանցիների մի խմբին որոնք փոխուել են Սուխումի նահանգը, և պարապում են ծխախոտի մշակութեամբ. այստեղ սաստիկ ծահճալին տեղ էր և շնորհիւ նոցա եռանդուն գործնէութեան զորացելեն այդ տեղերը և այժմ այստեղ համարեա մալարիա չի լինում. այդ տեղն կայ 3700 ժուխ. որոնք ազնիւ աշխատանքով և արիութեամբ կարող են կռուել բնութեան դէմ և յաղթել:

### Ծ Ա Ղ Ի Կ.

Բնական ծաղիկը խիստ վարակիչ է, շատ հեշտութեամբ անցնում է մէկից միւսին. վարակիչ հիւթի էութիւնը վերջնականապէս չէ ուսումնասիրուած, վարակումից մինչեւ ծաղկի երեան դալը տեսում է ութից մինչեւ տասն օր:

Հիւանդութիւնն սկսում է մէջքի ցաւով և սաստիկ տաքութեամբ. ապա մի քանի օր լետոյ ծաղիկն սկսում է զուրս տալ և ծածկել ամբողչ մարմինը, առանձնապէս դէմքը և ծեռները: Դուքս տուածները սկզբում լինում են ինչպէս կարմիր բծեր, որոնք վեցերորդ օրը թարախուտում են (պուտուլա), տասն և մէկերորդ օրը տեղի է ունենում այդ պուտուլների չորացումը, և մորթու թեփոտելը. տաքութիւնն այդ ժամանակ աստիճանաբար իշնում է բնական աստիճանին:

Ծաղկի հիւանդութիւնը տեսում է մօտ չորս շաբաթ:

Խիստ կերպով պէտք է առանձնացնել հիւանդներին. որպէս ապահովութիւն՝ առաջնակարգ և զլխաւոր տեղը բռնում է ծաղկի պատուաստումը<sup>1)</sup>, որի ոյքը տարածւում է մի քանի դարուց աւել. պէտք է պատուաստել ժամանակ առժամանակ. զլխաւորապէս համահարակի ժամանակ պէտք է կրկնել:

ԱՐԻՒՆ ՀՈՒԾՈՒԹԻՒՆ—ԴԻԶԵՆԹՔՐԻԱ.

Արիւնալուծութիւնը շատ յաճախ լինում է որպէս համահարակ. ունի առանձին վարակիչ հիւթ, որը զլխաւորապէս վարակում է հաստ աղիքների լործաթաղանթը:

Այս հիւանդութեան համահարակի զարգացման համար նպաստաւոր հանդամանք են ներկայացնում տաք կլիման, տարուալ տաք եղանակը և այլ այսպիսի պայմաններ:

Այսպիսի հիւանդների կղկղանքները վարակիչ են և այս պատճառով հիւանդութիւնը հեշտութեամբ կարող է անցնել մէկից միւսին. այս հիւանդութիւնը մեծ ծաւալ է ստանում պատերազմների ժամանակ, որն, իհարկէ, շատ հասկանալի է:

Արիւնալուծութեան թեթե տեսակը շարու-

<sup>1)</sup> Առաջի պատուաստողն եղաւ անդիացի անմահ Զէննէրը (տես իմ «Ա.արակիչ հիւանդութիւն»), «Նուեր նորատի կանանց» գրքերը և «Առողջապահիկ թերթի» յաւելուածը՝ «Ծաղիկ և պատուաստ»:

նակւում է հինգից վեց օր և միշտ վերջանում է առողջանալավ. իսկ ծանր տեսակը առաջ է բերում յաճախ մահուան դէպքեր, որովհետեւ աղիքներում գոյանում են այս դէպքում մեծ վէրքեր:

Գլխաւոր աստիճներն են, տեղ, փորացաւ, անընդհատ տանջող նքոցներ. զգացւում է փորի ներքին մասերում ծանրութիւն են:

Կղկղանքը զառնում է բոլորվին հեղուկ և բաղկացած է լինում մաղասից, թարախից և աւելի կամ պակաս չափով մաքուր արիւնից, այս բոլորին միանում է և սաստիկ ծարաւը:

Բժշկութեան համար անհրաժեշտ է խիստ դիտան. հիւանդութեան սկզբում տալիս են լուծողական իւղ. յետոյ՝ կարմիր գինի և թէլ, ուրիշ ոչինչ: Փորի վրայ պէտք է դնել տաքացած փաթէթ. մնացածն արդէն բժշկի գործն է. կրկնում ենք՝ որ մեծ զեր է խաղում պահեցողութիւնը: Հիւանդին պէտք է խիստ կերպով առանձնացնել, սպիտակեղիները և կղկղանքը հիմնաւոր կերպով ախտահանել:

### ԼՆԴԱ.ԴԱ.ՐՈՒԻԹԻԻՆ—ՑԻՆԳԱ.

Շատ գիտնականներ այս հիւանդութիւնն ընդունում են որպէս վարակիչ հիւանդութիւն. սակայն անկասկած է այն՝ որ պիխաւոր պատճառը փչացած և վատ սնունդն է. առանձնապէս թարմ կանաչեղիներից և պտուղներից զուրկ լինելը: Այս պատճառով լնդագարութիւնը հեշտութեամբ զարդանում է այնպիսի տեղերում՝ որտեղ լինում է անբերրիութիւն, սով և պատերազմ:

Հիւանդութիւնն առաջ է գալիս ոչ յանկարծակի, այլ աստիճանաբար ունենում է հետեւեալ աստիճները. գունաթափութիւն, նիհարութիւն, թուլութիւն, լնդերի բորբոքումն, այսինքն. սկսում են ուռչել, ցաւել և արիւն հոսել և բերնից վատ հոտ է գալիս:

Համարեա միւնոյն ժամանակ ազդրերի արանքներում և մարմնի զանազան տեղերում երեւում են զանազան մեծութեամբ կարմիր կապտագոյն կամ մուգ գեղնագոյն բծեր, որոնք առաջ են գալիս արիւնաթափութիւնից. այդ բծերը շատ են ցաւեցնում, եթէ շատ մեծ են լինում:

Միւնոյն ժամանակ զգացւում է ցաւ և ուռած լոգերում, իսկ արիւնաթորութիւնը լինում է ոչ թէ լնդերի մաղասալին թաղանթից. այլ ուրիշ մաղասալին թաղանթներից:

Այս հիւանդութիւնը քրոնիկական է, խոնաւութիւնն ու մրսելը նպաստում են նորտ զարգանալուն:

Հիւանդին նշանակում են թարմ պտուղներ. կանաչեղին, նարինչ լիմոն, մածոն, բերանը ողոզում են լուծուացքով (մի թէլի գդալ բորնալին թթուած, կոմ բերթօլէտիան աղ, և կամ շիպ մի թէլի բաժակ բարկ չըրի մէջ, հարկաւ անհրաժեշտ է առամճնափոշի օրական երկուսից երեք անգամ):

### ՑՈՒԱ.ՐԱ.ՄԻ—ԱԵԽՄԱ.ՑԻԶԱՄ.

Սուր յօդաքամին դեռ ևս ոչ շատ առաջ համարում էին մրսելու հետեւանք, բայց այժմ շատ

բժիշկներ ընդունում են որպէս վարակիչ հիւանդութիւն, որի համար մրսելը միայն նախապատրաստող գեր է խաղում:

Հիւանդութիւնն սկսում է զանազան լողերի, առանձնապէս կրնկների սաստիկ ցաւով. այդ տեղերը ուռչում են, շոշափելիս սաստիկ ցաւ է առաջ գալիս, մորթին երբեմն կարմրում է, և այս բոլորը լինում է տաքութեան հետ միասին:

Սուր լողացաւը կարող է տեղել մի քանի օր և կտժ մի քանի շաբաթ, շատ յաճախ էլ կարող է դառնալ բրոնիկական, որը երբեմն տեսում է մի քանի տարի:

Յօդացաւը. դրամագիր է կրկնուելու և առաջ բերելու որակ զանազան հիւանդութիւններ, այդ պատճառով ինչքան մարդ շուտ ազատուի լողացաւերից, այնքան աւելի լաւ է:<sup>1)</sup>

ԹՈՔԱԾԱՊ ԿԱՄ ԹՈՒԲԵՐԻ ԲՈՐԲՈՒԲՈՒՄՆ.

Թոքատապի ծանր տեսակը՝ կրուպօղնայա—պնկ մոնիա՝ սկսում է սարսուռով, տաքութեան բարձր

<sup>1)</sup> Ես ինձ այսաեղ թոյլ եմ տալիս ասելու ի միջի այլոց, որ շատ ցանկալի է իւրաքանչիւր մարդունենայ իւր տնային փոքրիկ դեղատունը. Հասկանալի է, որ այս դեղատնից օգտուելը պիտի լինի ըստ բժշկի տուած խորհրդի և ոչ ինքնագլուխ. Ամենաանշրաժեշտ դեղերը պիտի լինեն քինա քինա՝ հինդական գրան, սալիցիլեան նատր՝ ութեական գրան, սալէօլ ութեական գրան, վալէրիանի կաթիլ բօրնի քիսլոտա. սոդա, խոտ ևն.

աստիճանով, հազորի, հեղոցով, և կրծքի վանդակի մի կողմի, մեծաւ մասամբ թիկունքի տակի ծակծկոցով:

Հազն սկզբում չոր է, երկրորդ, երրորդ օրերում զառնում է աւելի թաջ, խորխի մէջ արդէն սկսում են նկատուել արիւն, որի պատճառով խորխն էլ ստանում է ժանդի գոյն (ժանդալին խորխ), երբեմն էլ ունենում է գեղին զաքրանալին գոյն:

Տաքութեան բարձր աստիճանը մի քանի օրուայ ընթացքում միշտ միատեսակ է լինում, ապա յանկարծակի իշնում է, այսինքն տեղի է ունենում կրիզիս. այս լինում է սովորաբար հիւանդութեան չորրորդ կամ հինգերորդ օրը. ինչպէս և երբեմն էլ տասը կամ տասնութերորդ օրը:

Կրիզիսից յետոյ հիւանդութեան բոլոր աստիճները անհետանում են, մնում է թոյլ հազ, և սկսում է առողջանալը: Բայց հիւանդութեան այս ընթացքից երբեմն շեղումներ էլ են լինում:

Հիւանդութեան էութիւնը կազմում է բորբոքումը, որը վնասում է թոքերի մի մասը, աւելի յաճախ ներբին մասը:

Բորբոքումը զարգանում է միկրոբների պատճառով, որոնք թափանցում են մեր օրգանիզմը. այդ միկրոբները կոչւում են պնկ մոկոկ:

Թոքերի այս տեսակ բորբոքումը լուրջ հիւանդութիւն է, մրսելը այս հիւանդութեան շատ նպաստում է. պահանջում է ուշադիր խնամք, և ամենին ինչ բժշկի խորհուրդով պիտի լինի, ապիկներ (բանքա). սեղանի զդալով օրական մի քանի անգամ գի-

Նի՞ սրտի կանոնաւորութեան համար. ցանկալի է նոլնպէս ոչնչացնել խորխը. մինչև կարքօլկա (5 տոկոսանոց) առնելը, խորխի վրայ ածում են սեղանի գդալով հասարակ տնալին աղ:

ԲԱՐՈԿԱՑԱՀ ԿԱՄ ԹՌՔԱԽԾ—ՏՈՒԲԵՐ-  
ԿՈՒԼՈԶ.

Թոքախտը ժանր, տեղական և վարակիչ հիւանդութիւն է, աշխարհի ամեն կողմերում իւրաքանչիւր տարի բազմաթիւ զոհեր է տանում:

Ամեն տարի բոլոր մեռածների մէկ վեցերորդ մասը լինում է առհասարակ թոքախտից:

Հիւանդութիւնն առաջ է գալիս, երբ մեր օրդանիզմը թափանցում են որոշ միկրոբներ, որոնք Կոխի բացիներ կամ փայտիկներ են կոչում:

Այդ փայտիկները մանելով մարդու օրգանիզմի մէջ և այնտեղ իրանց զարգացման համար նպաստաւոր հող գտնելով, առաջ են բերում բորբոքումն և կամ ոչնչացումն մեր օրգանիզմի մի որևէ մասի—թոքերի, աղիքների, յօդերի, ոսկորների ևն:

Սակայն ամենից յաճախ նոքա վնասում են շնչառութեան գործարանները, զիսաւորապէս՝ թոքերը, այդ պատճառով թոքախտը ներկայանում է որպէս թրոնիկական թոքերի բորբոքումն:

Թոքախտն առհասարակ զարգանում է միայն որոշ նախատրամապրոց պատճառներով, որոնցից զիսաւորն է ժառանգական թողլ կազմուածքը, թոքերի և կրծքի վաճակի թողլ կազմութիւնը երկարաւակ վատ առողջապահական պայմանները, ինչպէս և վատ օղը, սնունդը ևն:

Այսպիսի հիւանդների խորխը չորանալով, դառնում է փոշի և չափազանց նպաստում է հիւանդութեան տարածման, որովհետեւ դորա մէջ է գրանում վարակիչ հիւթը:

Թոքախտը, կամ ինչպէս ասում են թոքերի թրոնիկական բորբոքումը միշտ առաջ է գալիս վերջինիս հիւանդների չափազանց ոչնչացումով. այդտեղ գոյանում են խորշեր (կավերնա), որի պատճառով զլուխտորապէս և տեղի է ունենում արիւնաթքումը:

Թոքախտի միւս աստիկներն են, հազ, հեռյ, տաքութիւն, գիշերներն առատ քրախնք, թուլութիւն, վատ ախորժակ, սրտի բաբախումն, այս բոլորը պատճառում են կամ միտքամանակ և կամ առանձին առանձին:

Բժշկութեան զիսաւոր պայմանն է առատ մաքուր օղը և լաւ սնունդ, որի համար ձեռնառու է ապրել գիւղերում, մասնաւոր սանատորիաներում, զանազան կուռորժներում, օր, Բորժօմ, Աբասթուման, Ղրիմ, օգտակար է նոյնպէս և անապատներում ապրելը և ձիու կաթով սնուելը—կումիս:

Կրկնում ենք չմոռանալ թարմ օղի և սնունդի առատութեան մասին, պէտք է տալ հիւանդին նոյնպէս ծու և կաթ:

Թոքախտաւորի խորխը պէտք է հեռացնել և ախտահանել, պէտք է խիստ արգելել, ոչ թէ այսպիսի հիւանդներին, այլ առհասարակ ամեն մարդու՝ թքել յատակի վրայ: Արտասահմանի մի յալտնի կուռորժում—Դաւոս, մինչև անգամ տուգանը է պահանջում փողոցում թքողից, այնտեղ

ամեն մէկը գրպանում ունի մի աման խորխի հա-  
մար, որի մէջ հաւաքուածը ալրում է տունը:

Թոքախտաւորի սենեակը պէտք է առանձնա-  
ցած լինի, և լաւ ախտահանելուց յետոյ միայն ա-  
ռողջին կարելի է բնակեցնել: Ախտահանելու հա-  
մար՝ շաբաթներով պէտք է բնակարանը քամուն  
տալ, պատերի պաստառները փոխել, իսկ եթէ չկայ՝  
կրով նորոգել, լուանալ կարբօլկայով և սուլե-  
մալով:

### Խ Օ Լ Ե Բ Ը.

Խօլերան համաճարակ հիւանդութիւն է, որի  
էութիւնն են կաղմում որոշ խօլերեան միկրոբները,  
որոնք յայտնի են խօլերական ստորակէտ անունով,  
որոնք թափանցելով մարդու ներսը խիստ կերպով  
վնասում են զիսաւորապէս բարակ աղիքների մա-  
ղասալին թաղանթը:

Թէ ի՞նչ ճանապարհով է փոխւում խօլերայի  
թոյնը մէկից միւսին, դեռ ևս կատարեալ կերպով  
յայտնի չէ, բայց ամենից հաւանական է, որ փո-  
խանցուիլը կատարւում է սննդեան գործարանների  
միջոցով:

Սյս հիւանդութիւնն ունեցողի կղկղանքը  
անպայման վարակիչ է և վարակում է այն ամենը,  
ինչ որ այս կամ այն կերպ կեղտուում է դորա-  
նով. շորեր, կերակուր, խմելիք ևն:

Խօլերայի թոյնը զարգանում է հաւանակա-  
նաբար հողի և ջրի մէջ: 1904 թ. խօլերայի ժա-  
մանակ թաքուում խոշորացոյցով դտել կին ստորա-  
կէտերը բաղնիքի ջրի մէջ:

Խօլերայի աստիկները հետևեալներն են. շարու-  
նակ փսխումն, զօրեղ փօրլուծութիւն, անգոյն և  
հեղուկ կղկղանքի սպիտակ զանգուածով բրնձանը-  
ման կղկղանք, սրտի սաստիկ թուլութիւն, ընդ-  
հանուր թուլութիւն, մորթու կոլութիւն, մկանունք-  
ներում ցաւ և ցնցումներ, վերչապէս մարմնի ար-  
տաքին մասի որոշ չափով կապտելը, և միզի հա-  
մարեա կատարեալ բացակայութիւն. սակայն այս  
բոլոր բարդութիւնները միասին չեն լինում: Հի-  
ւանդութիւնը տեսում է մի քանի ժամից մինչեւ մի  
քանի օր:

Բժշկութեան համար ամենից առաջ պէտք է  
տաքացնել հիւանդին, ոտքերին դնել տաք չրով լի  
սրուակներ, ամբողչ մարմինը քսել կանֆօրնի սպիր-  
տով—բափուրի ողի—ախրան ժամանակ մինչեւ որ  
մորթին կարմըի:

Փսխելու առաջն առնելու համար՝ սառցէ  
փոքրիկ կտորներ պիտի կուլ տաք դնել այսպէս  
ասած բարձր կլիզմա տաք չրից, որի ժամանակ կա-  
րելի է երեքից չորս բաժակին աւելացնել մէկ թէլի  
գդալ բնակաղնի (տաննին):

Խիստ պէտք է պահել այն բոլոր առարկանե-  
րը, ինչ որ նորա հետ շփումն ունեն և իրան հի-  
ւանդին էլ կղզիացնել. իսկոյն տանել բարաքները,  
որտեղ բոլոր յարմարութիւնները կան:

Հիւանդի սենեակում առողջները չպէտք է ըն-  
դունեն ոչ ուտելիք և ոչ էլ խմելիք. և խոյս պիտի  
տալ ստամոքսի խանգարումն առաջ բերող նիւթեր  
ուտելուց, չփախենալ, լինել կենսուրախ և խիստ  
պահպանել բժշկի խորհուրդները: Խօլերի ժամա-

նակ<sup>1)</sup> թող քահանաները եկեղեցում քարոզներ խօսեն և բացատրեն նոցա պաշտպանութեան համար անհրաժեշտ գիտելիքները, որը մի ազնիւ դործ է իւր կոչման բարձրութիւնը ճանաչող քահանալի համար:

### ԺԱՆՏԱԽՄԾ—ԶՈՒՄԱ.

Ժանտախմար հին ժամանակից յայտնի է որպէս վարակիչ հիւանդութիւն, որն ընդ միշտ գոյութիւն ունէր Հնդկաստանում և Փոքր Ասիայում: Եւրոպայում ժանտախմար զօրեղ կոտորած գործեց միշին դարերում. իսկ ամենամեծ չարդը, որ պատճառեց՝ դա տասն և չորսերորդ դարումն էր, որը յայտնի է սև մահ անունով. որովհետեւ այդ հիւանդութեան ժամանակ շատ արիւնահոսութիւն

1) Խօլերի ժամանակ խորհուրդն են տալիս դործածել շատ զանազան անմիտ դեղեր, աւելորդ չեմ համարում առաջ բերել մեր կաղմած մի գեղը, որը զանազան տեղեր գործածելով, ցանկալի հետեւաների են հասել Խոլերայի սկսւելու ժամանակ տալ այս կաթիլները, սալէօլ չորս մաս, ափիոնի ոգեթյունը՝ երկու մաս, վալերեան եթերի կաթիլ տասն երկու մաս և կէս մաս անանուի էսէնցիա. պէտք է հիւանդին սեղանի դդալով եռացրած սառն օրի հետ տասն և հինգից մինչև քսան կաթիլ օրական երեր չորս անգամ տալ այս հասակաւորների համար, իսկ հինգ և տասն տարեկանին՝ տալ մի դդալ չըի մեջ հինգ-տասը կաթիլ: Յամենայն դէպս զարձեալ պիտի զիմել բժշկի խորհրդին, առանց նորան ինքնազլուխ կերպով գործ կատարելն այսպիսի դէպերում անխոչեմութիւն է: Կարդա Առողջապահիկ թերթում» խօլերի մասին յօդուածները:

Էր լինում թոքերից, ստամոքսից և աղիքներից: Երբեմն ժանտախմար տանում էր լնակչութեան մի չորրորդ մասը: Միայն տասն և իններորդ դարու կեսերում Եւրոպան ազատուեց ժանտախմից, բայց դեռ ևս չէ վերացել այն երկիւղը, որ դարձեալ կարող է Ասիայից մուտք գործել, որովհետեւ վերջին ժամանակներս այդ հիւանդութիւնը Փոքր Ասիայում մեծ ծաւալ ստացաւ և նոյն իսկ անցեալ 1904 թ. գեկտեմբերին երեեցաւ Ուրալում, ուր բերել էին կիրկիզները:

Հիւանդութեան պատճառ համարում են այն միկրոբներին, որ վասն երսէնը և Քիթազատօն (Ետապոնացի): Ժանտախմի այդ բացիլները գտնւում են բորբոքուած աւշալին գեղծերում, միզում, կղկղանքներում, խորխում, երբեմն և արեան մէջ:

Վարակումը տեղի է ունենում հիւանդի հետ կամ անմիշական շփումն ունենալուց և կամ մի երրորդ առարկայի միշոցով, որքան ազգաբնակչութիւնն անձաբուր է և անտարբեր, նոյնքան կոտորածն աւելի մեծ, զորանով է և բացատրուում նորամշտական գոյութիւնն արեելքում:

Հիւանդութեան տարածման համար մեծ գեր են խաղում մեծ մկները, որոնք արեելքում շաա բազմացելին և համածարակի ժամանակ կոտորում են. որոշ գեր են վերազրում այդ հիւանդութեան տարածման համար նոյնպէս և միշատներին, որովհետեւ հիւանդ մկների վրայից վերցուած միշատի արեան մէջ նկատել են ժանտախմի բացիլներ:

Ժանտախմի երեք տեսակը կայ, գեղձուաոյ-

ցալին (Բուքօ) Պնկմոնիկական (թոքային) և նեխսախտալին (սեպտիկական):

Դեղձուռոյցալին ժանտախտն սկսում է ցընցող սարսուռով, որին հետեւում է տաքութեան սաստիկայումը մինչեւ բառասուն տատիճան, շուտով յայտնուում են ցաներ և ուռչում են ինչպէս և արմունկի, թևատակի, ծնոտի տակի և զգի վրայի աւշալին գեղձերը: Դոքա թարախոտում են և երկու երեք օրից լետոյ պատռուում են, այդ հիւանդութեան ծանր դէպքերում լինում է զլխի պտոյտ, դիտակցութեան մթնացում և մահուան դէպքեր լինում են ընդհանուր թուլութիւնից և սրտի կաթուածից:

Սեպտիկական ժանտախտի ժամանակ նոյնպէս ուռչում են գեղձերը. ուռչում է և ամրող մարձինը, արիւնահոսութիւն առաջ է գալիս ստամոքսից և աղիքներից և այս տեսակի ժանտախտը անպայման մահացու է:

Պնկմոնիկական ժանտախտը սովորական թոքերի բորբոքման նման է, միայն խորխում գտնուում են ժանտախտի բացիներ:

Ժանտախտի ժամանակ լինում են բարդութիւններ, օր, կերատիդ—աչքի թարախումը և կուրացումը: Նախազգուշացումը ժանտախտաւորի համար շատ կարեօր է, որովհետեւ շատ համանարակների ժամանակ մահը հասնում է մինչև իննսուն տոկոսի:

Որպէս բժշկական միջոց ժանտախտի դէմ օգտակար է շիճուկալին բժշկութիւնը (սէրօթե-

րապիս). սակայն սորա ներգործութիւնը մի քանի զիտնականներ մերժում են:

Ժանտախտի համանարակի ժամանակ նախազգուշացնելու համար բժիշկ Խաւիկինը (հրէա) առաջարկեց շիճուկով պատուաստելը. բայց այս կը գեռ ևս վերջնականապէս պարզուած չէ:

Սակայն ամենից լաւն է՝ առանձնացնել հիւանդին, այրել նորա բոլոր իրերը և նոյնպէս արտաթորութիւնները—մաղձ, մէզ, կղկղանք և խստիւ պէտք է հսկել մարձնի և ընակարանի մաքրութեան, ոչնչացնել մկներին և հիւանդներին տեղաւորել բաղաքից գուրս ժամանակաւոր հիւանդանոցներում: Այսաւել մէկ էլ կպնդեմ, որ ամեն մի համանարակի վերայ պէտք է նայուի իրեկ սոցիալական երևոլթի, որը սերտ կերպով կապուած է բնակութեան, կեանքի պայմանների հետ: Միայն այն միջոցները, որոնք ժողովուրդի մէջ խոր մտած են, կարող են յաջողութիւն ունենալ: Իսկ ամեն տեսակ ժամանակաւոր առողջապահական միջոցները նպատակին չեն հասնում, մանաւանդ նրբանք, որոնք ժողովրդի մէջ բռնի կերպով են մրցուում: Հարկաւոր է կանոնաւոր առողջապահական մշտական կազմակերպութիւն, որ հիմնուած լինի գիտնական հիմունքների վրայ և միևնույն ժամանակ լինի «ոսկը լոսկերաց» ժողովրդեան:

Վեներական Հիւանդութիւններ եկ Սիֆիլիս.

Այս զրբում մենք դարձեալ շեշտում ենք, որ վեներական հիւանդութիւնների և սիֆիլիսի ժա-

մանակ՝ չի կարելի ինքնազլուխ կերպով բժշկուել, այլ անպայման պէտք է դիմել բժշկի օգնութեան:

Սլս հիւանդութեան մասին հայերէն կան հրատարակած բաւական քանակութեամբ գրքեր. անպատճառ վերցրու և կարդա, որովհետեւ այսպիսի գրքերի հետ քո ընդարձակ ծանօթութիւնը կլինի միւնուն ժամանակ և այդպիսի հիւանդութիւնների համար նախազդուշացման միջոց:

Հոգեկան և մարմնական ողջականութիւնը, ինչպէս մինչեւ ամուսնութիւն, նոյնպէս յետոյ էլ՝ թող լինի առողջութեանդ լաւ հիմք. զսպել իւր կրքերը. ամրացնել կամքի ոյժը և բնաւորութիւնը ահա կրթութեան ամենազլիսար հիմունքը:

Երբ կհասնի ամուսնութեանդ ժամանակը և իւրաքանչիւրդ ծեր իդիալի համապատասխան միմիանց կդանէք, հասկանալի է, որ միայն այսպիսի ամուսնութիւնից առաջ կայ ապադայի համար ցանկալի սերունդը: Նախքան ամուսնութիւնը պէտք է դիմել բժշկին՝ իրան քննել տալու համար, որովհետեւ այս դէպքում բժիշկն ի նկատի կունենայ բոլոր քո կազմուածքը:

Վեներական հիւանդութիւններից յայտնի է սուսունակը, որն ունի ծանր հետեւանքներ, ժանաւանդ, եթէ առանց կանոնաւոր բժշկուելու պսակւում են. կինը այսպիսով բազմատեսակ հիւանդութիւնների կարող է ենթարկուել:

Սուսունակի միկրորը — նէլսոնի գօնծկօկը, շատ շատերին անբախտացրել է: Միւս կողմից սիֆիլիսն էլ մարդու ալլասերման զիսաւոր պատճառն է. կարող է նորանից առաջ դալ դիսի և ողնաշա-

ըի ծանր հիւանդութիւններ: Երեխաների վիժումն էլ սրանից է առաջ գալիս:

Զմոռանաս սովորելու առողջազիտութեան և մանկավարժութեան հիմունքները. ահա ուղիղ հանապարհը երկրի վրայ երշանկութեան հասնելու:

Վեներական հիւանդութիւնը և սիֆիլիսը վարակիչ հիւանդութիւններ են, գոնեա զդուշ եղիր հայրենիք վերադառնուց նկատմամբ քո մերձաւորներին. այս տողերը թող քեզ համար նախազգուշացման միջոց լինին:

### ԶԱՐԴՈՒԱԿԾ — ԴՐԱՎԱՐՈՒՄ.

Զարգուած կոչւում է, երբ մարմնի մի որեւէ մասը արտաքին ուժի ազդեցութեան առաջնաւում է. օր, բուռնցըի, ոտի, ֆայափ կամ մի որեւէ այլ առարկալի հարուածը որոշ չափ վնասում է և կամ շարժում է հարուած կրած տեղը:

Զարգուածքների տեսակին են պատկանում մարմնի ընդհանուր ցնցումը — շոկ և մարմնի զանազան տեսակ կոտրուած, խախտուած և վիրաւորուած տեղերը:

Թէ լուրջ և թէ յածախ նոյնպէս աննշան ջարդուածները, բայցի տեղական աստիկով յայտնուելուց, ունենում են ներգործութիւն ամբողջ մարմնի վրայ. այդ ազդեցութիւնն ամենից շատ աչքի է ընկնում զիսի վնասուելու կամ այսպէս ասած ուղեղի ցնցման ժամանակ:

Վերջին դէպքում պատահում է զիսի և ողնաշարի ուղեղների դորձունեութեան դադարումն,

որն արտարայտում է անգիտակից գրութեամբ, կատարեալ անշարժութեամբ և սրտի գործունէութեան չափաղանց դանդաղութեամբ: Այսպիսի երերումը կոչում է շոկ, որը երբեմն հիւանդին տանում է գէպի մահ: Եռկի ժամանակ թէպէտ և միշտ անգիտակից գրութիւն չի պատահում, բայց միշտ նկատում է հակումն գէպի ուղեղի աննորմալ գործունէութիւն:

Հիւանդները կամ սաստիկ յուղուած են լինում. աղաղակում են, լաց են լինում, կամ ընդհակառակը, ամեն բանի անտարբեր, քնկոտ. ծանր գէպքերում գէմքը գունատ, շրթունքները կապոյտ, մարմինը հածկուած սառն բրտինքով են:

Այսպիսի գէպքերում անյապաղ օգնութիւնն անհրաժեշտ է:

Այս գէպքում էլ, ինչպէս ուշաթափութեան ժամանակ, պէտք է հոգս տանել, որ արիւնը զօրեղ կերպով հոսէ դէպի սիրտն ու զլուխը: Դորա համար հիւանդին պառկեցնում են հորիզոնական ուղղութեամբ, զլուխը գէպի յած, իսկ ծեռներն ուստերը դէպի վեր:

Սրտի դդալի, ծոքրակի, ուսւերի և սրունքների վրայ դնում են մանանեխի սպեղանի: Տալիս են անուշաղրի ողի հոտոտելու համար, իսկ եթէ հիւանդը կարող է կուլ տալ, տալիս են գինի և կամ թունդ սուրճ: Բժիշկները շոկի ժամանակ սրսկում են բափուրի ողի, էֆիր ևն ևն:

Ճմլում (Կօնտուզիօ), ճմլումները լինում են թեթև և ծանր. թեթև ճմլումների ժամանակ նըկատելի են կաշու տակ արիւնաթափութիւն, որն

առաջանում է արեան պատռուած զանազան անօթներից—այս կոչում է և կապտումն:

Բժշկութիւնը պիտի լինի սառեցնելը, այսինքն սառցով փամփուշտ դնելը. բժշկութեան ընթացքում երբեք եռկիւղ չպէտք է կրել արիւնահոսութիւնից և քամն չորս ժամ յետով զնել աաք փաթաթներ (կոմպրէս), իսկ մի առ ժամանակ յետով անել մասսաժ:

Ծանր չարդուածքի ժամանակ՝ աչքի է ընկնում շոկի երկութը, որը պէտք է բժշկել այնպէս, ինչպէս վերեն տաւած է. ճմլուած տեղը դնել սառցէ փամփուշտ և հիւանդին հանգիստ թողնել:

Ծանր ճմլումների հետ սովորաբար կապուած են սկորների կոտրուելը և կամ ներքին գործարանների վնասուելը:

Զարդուած տեղի արտաքին մասը—կաշին, երբ պատռում է, այդ կոչում է առհասարակ վէրք, և նալեած այն առարկալին, որից առաջացած է վէրքը, ըստ այնմ էլ կոչում են, այսպէս օրինակ, կոտրուած, չարդուած, ճմլուած, պատռուած, ծակած ևն: Եթէ վէրքը հետզհետէ կանոնաւոր կերպով սկսում է առողջանալ և եղերքները միմեանց կողած են, այն ժամանակ նոքա միանում են անպայման, —այսպիսի առողջանալը կոչում է պըխիմա ինտէնցիօ. իսկ երբ որեւէ բանով խանգարւում է վէրքի կանոնաւոր ընթացքը և նորա եղերքները չեն կպչում միմեանց, այն ժամանակ տեղի չի ունենում միացումը և գոյանում է թարախ. այս և կոչում է սէքունտա ինաւէնցիօ:

Այն պատճառները, որոնցով բոլոր վէրքերը

չեն առողջանում պրիմա ինտէնյիօնով, թաղնուած  
են շրջապատող օդում, ուր փոշու հետ խառն կան  
միկրոբներ:

Այդ միկրոբների մէջ կան այնպիսիները, որոնք  
առաջ են բերում ներսում և թարախակալումն կամ  
որոշ հիւանդութիւններ, ինչպէս կարմիր քամի,  
փայտացումն (տետանոս) են:

Վերըի մէջ ընկնող միկրոբների քանակից և  
յատկութիւնից է կախուած մարմնի որոշ և կամ  
ամբողջ ծասի հիւանդանալլը: Լինում են նոյն իսկ  
գէպքեր, երբ չնչին քերծուածքն կարող է պատ-  
ճառ դառնալ արեան վարակման<sup>1)</sup>:

Ոչ միայն վերքը շրջապատող օդը, այլև այդ  
օդի հետ առնչութիւն ունեցող բոլոր առարկաներն  
ու իրերը, օր, ժեռները, կարասիքը, զգեստները, ևն,  
պարունակում են մեծ քանակութեամբ միկրոբներ,  
և վերքերի հետ շփուելուց կարող են իրանց կող-  
մից առաջ բերել վարակումն: Այսպիսի շփումն է  
զլիստոր պատճառը վերքի վարակման, իսկ օդով  
վարակուելը երկրորդական տեղ է բռնում:

Այսպէս, ուրեմն, չմոռանաս, որ առաջին պարտքդ  
պիտ լինի պահպանել վերք միկրոբներից, որի հա-  
մար կալ բժշկութեան միջոց, որը կոչւում է Ասիա-  
տիկա: Իսկ այն միջոցը, որը դորժ է դրւում միկ-  
րոբների ոչնչացման համար, կոչւում է Անտիսի-  
տիկա:

<sup>1)</sup>Տես իւ «Գյուղական կոիւ» դիրքը:

### ԱՍԵՊԾԻԿԱ ԵՒ ԱՆՑԻՍԵՊԾԻԿԱ..

Ասեպտիկայի էութիւնը կազմում է ամենից  
առաջ մաքրութիւնը, այս խօսքի ամենալնդարձակ  
իմաստով, օր, տեղի, բնակչութեան, կամ կարասի-  
քի, սպիտակեղէնի, ձեռների և բժշկական գոր-  
ծիքների և վերջապէս զանազան կարևոր փաթեթ-  
ների մաքրութիւն:

Այն բնակարանը, ուր պիտի փաթաթուեն հի-  
ւանդի մարմնի զանազան մասերը, պէտք է մաքրու  
թինի փոշուց. գորա համար նախ պէտք է մաքրել  
պատերը, առաստաղը, լուսամուտները, գռները  
անպայման թաց կամ սուլէմայով թթուած  
շորով:

Այս կերպ պիտի վարուել կարասիների և միւս-  
բոլոր իրերի հետ: Ի վերջով պէտք է լուանալ յա-  
տակը սապոնազրով և սրբել սուլէմայով թթու-  
ած շորով: Վերառուածների և նոցա շրջապա-  
տողների սպիտակեղէնները պէտք է միկրոբներ չու-  
նենան, այսինքն լինեն ստերիլնի:

Ստերիլիզացիա կոչւում է այն գործողութիւնը,  
որով ոչնչացնում են միկրոբները տաքութեան բար-  
ձրը աստիճանով, առանց քիմիական նիւթերի օդ-  
նութեան:

Ստերիլիզացիայի ամենահասարակ եղանակը  
եռացումն է. այն բոլոր իրերը, որոնք եռացումից չեն  
ոչնչանում, այդ կերպ են ախտահանւում: Դիտնական  
փաստերը ցուց են տալիս, որ կէս ժամուայ եռա-  
ցումը բաւական է, որ ոչնչան բոլոր միկրոբնե-

ըլք: Ստերիլիզացիալի մի ուրիշ եղանակն էլ այն է, որ մինչև մի որոշ ժամանակ իրերը պէտք է բռնել հոսող տաք գոլորշիների վրա. այս բանի համար կայ մի առանձին աման, որը կօչում է ստերիլիզատոր, ահա ինչու համար բժիշկը և շքապատողները շորերի վրա հագնում են այսպէս առաջ ստերիլնի խալաթ, իսկ հիւանդին հազդնում են ստերիլնի շապիկ:

Չեռերի մաքրութեան համար հետեւալ միջոցն են գործ դնում:

Լուսանում են ստերիլնի խոզանակով, սապոնում են տաք շրով հինգից մինչև եօթն րոպէ, որպէս զի այսպիսով կաշին լաւ մաքրուի աղջից և միկրոբներից, առանձին ուշադրութիւն պիտի դարձնել եղունդների տակը: Կէս վայրկեան տեղութեամբ լուսանում են նոյնպէս սուլէմալով, յետով արդէն սպիրտի խառնուածքով և սպիրտում թրջուած մարլի կտորներով, վերջն էլ սուլէմալի խառնուածքով:

Ճիշտ այնպէս, ինչպէս ծեռները, մաքրում են նոյնպէս և մարմնի միւս մասերը, եթէ իհարկէ այդ տեղերում կատարուել է որևէ վիրահատութիւն (օպերացիա), այն տարբերութեամբ, որ եթէ այդ տեղերում մաղ լինի, նախ և առաջ պէտք է այդ մազերը վար տալ և լաւ կլինի, եթէ լուսանալն էլ կատարուի կանաչ սապոնով, բենզինով, սպիրտով, այս կերպ գոնէ վիրահատման տեղը չի թարախուաի:

Բոլոր մետաղալին գործիքների ստերիլիզացիան կատարում է եռացումով և հետեւալ լուծուացքով,

մի բաժակ չըի մէջ մի թէլի զգալ մաքրուած սօդալ, և գործողութիւնը պիտի տեսէ մօտ կէս ժամ: Աւելորդ է լիշել, իհարկէ, որ գործիքները իւրաքանչքիւր անգամ գործ գրուելուց յետոյ դարձեալ պիտի եռացուին:

Որպէս փաթաթ գործածուելիք ուկիննէ իրերը, ինչպէս և ուկիննէ խողովակները, որոնք կոչւում են զրէնաժ և միւս տարկաները նոյնպէս պիտի ենթարկուեն ստերիլիզացեալի և պահուեն կարբօնան թթւուափի հինգ տոկոս լուծուացքի մէջ:

Գործածական է մարլինը, որը աչքի է ընկնում իւր ծծողականութեամբ, առաջուց կտրատում



Ձև 10.

Են քառանկիւնածև և մի քանի շերտ դարսուած իրար վրա դնում են վէրքին, սորա վրալից գնում են մաքուր հերոսկորեան բամբակ, ապա հասարակ բամբակ, և այս բոլորն ամբացնում են փաթաթնե-

րով, որոնք սովորաբար պատրաստուած են լինում կամ կարծր մարլեալից և կամ միտկալից. ինչպէս միւս փաթեթները

Վերջացնելով համառօտ կերպով ասեպտիկան, այժմ անցնենք անտիսեպտիկալի մասին:

Անտիսեպտիկալի նպատակն է միկրոբների կամ ոչնչացումը և կամ դոցա դործունէութեան թուլացումը, այդ նպատակի համար զործ են ածում զանազան բիօմիական նիւթեր, լուծուած և կամ փոշի. սոքա ախտահանիչ նիւթեր են:

Աւելի գործածական է սուլէմալի լուծուածքը (մէկ մաս սուլէմալ՝ հաղար մաս չուր): Կարոյեան թթւուածի լուծուացքը երկուսից մինչև հինգ տոկոս:

Փոշիներից աւելի գործածական է իօդօֆօրմը: Գործածական են նոյնպէս որպէս ախտահանիչ միջոց սպիրտը, արաղը, կոնեակը և օղրկօն:

Անտիսեպտիկալի ժամանակն էլ փաթաթները ծծուած են լինում իօդօֆօրմով, սուլէմալով և այլ ախտահանիչ հիւթերով:

Անհրաժեշտ է սակայն գիտենալ, որ վերքի բուժելու համար ամենաիդէալական միջոցն է ասեպտիկան:

Բնտանեկան իրերը, որոնց անտիսեպտիկալով չեն կարելի մաքրել և ենթարկել ոտերիլիզացեալի, ախտահանում են ֆօրմալինեան գազով, որով լրցնու են բնակարանը որոշ գործիքների միջոցով, որոնք ֆօրմալեան լապտեր են կոչւում. ֆօրմալինը պատրաստում են քարածուխից:

Վէրջի չՈԳԱԾԱՐՈՒԹԻՒՆԸ, ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՒ ԲԱՐԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Վիրաւորուածին օգնելու համար ամենից առաջ պէտք է նորան թողնել հանդիսա դրութեան մէջ, ապա լուանալ ձեռներն ալնպէս, ինչպէս վերեր նկարագրեցինք և սկսել քննել վերքը և նորա եղերքները: Ապա վերքը շրջապատող անմաքուր սպիտակեղէնները հեռացնել և փաթաթել ստիրինի սպիտակեղէնով և ծածկել մի գունդ մարլեալով կամ մի կտոր սուլէմալի լուծուածքով ծծուած բամբակով:

Երբ այդ իրերը առ ձեռն պատրաստ չեն գտնուի, այն ժամանակ կարելի է գործածել եռացրած չուր, օղի, կօնեակ, կամ օդրկօն. Ժալրահեղ դէպքում աղբիւրի չուր:

Պէտք է մաքրել և վերքը շրջապատող մորթին, լուանալ տաք չրով, սապոնով և սպիրտով ծծուած խոզանակով, վերջապէս լուանալ և սուլէմալի խառնուածքով:

Երբ վերքը գտնւում է գլխի և կամ այլ մազոտ տեղերում, ամենից առաջ մազերը պէտք է վեր տալ և նոր ձեռնարկել մորթու ախտահանութեան:

Այս գործողութիւնից յետոյ՝ խնամք տանողը երկրորդ տնզամ պէտք է ձեռները լուանալ և ապա զնէ կապոցները. իսկ վերքը կապելուց յետոյ նոր պէտք է ուշք դարձնել հիւսնդի հանդիսա դրութեան մասին:

Պէտք է ի նկատի առնել, որ վէրքը չպէտք է շոշափել մատերով, երբ անհրաժեշտ չէ, կարելի է շոշափել միայն դործիքներով և կամ ստերլի փաթեթներով:

Այն գործիքները, որոնք արդէն գործածուել են, իսկոյն ոտերլիզացեալի պիտի ենթարկուեն և կամ հինգ տոկոսանոց կարբօլեան թթւոյտով ախտահանուեն. չպէտք է մոռանալ, որ թէ կողմնակի մարդկանց և թէ հիւանդներին արգելում է ձեռք տալ գործիքներին և վէրքին:

Կասկած չկայ, որ նախ քան կապոց գնելը, պէտք է ընդհատել արեան հոսելը, այս մասին յետոյ, ապա վէրքի եղերքները միմիանց մետաքսի և կամ այլ թելով կարել և կապել կրկնակի հանդոց յով:

### Վէրքի ՏԵՍԱԿՆԵՐԻ.

Վէրքերը նայեած թէ ի՞նչ գործիքով են առաջ եկել և մարմնի ո՛ր մասումն են գտնւում, ըստ այսմ էլ լինում են աւելի կամ պակաս չափով վնասակար: Ամենից հեշտ բժշկում են հաւասար եղերքներով կարուած վէրքերը, որոնք կանոնաւոր բժշկութեան ժամանակ առողջանում են առանց թարախի:

Ճմլուած վէրքերը, որոնք առաջ են եկել դուլ գործիքով և ունեն անհաւասար եղերքներ և զրդդղուած են, այսպիսի վէրքերը չեն առողջանում առանց թարախի: Այսպիսի վէրքերը հասկանալի է, որ չի կարելի կարել:

Ինչքան կարեւոր է վիրաւորուած օրգանի գործունէութիւնը, և ինչքան վէրքն աւելի խորն է գտնւում, այնքան աւելի կարելի է երկիւղ կրել՝ մէջը միկրոբներ մտնելուց. այս պատճառով պէտք է շատ լուրջ հետևել ասեպտիկալի և անտիսեպտիկալի կանոններին:

Զանազան հրագէններից (հրացան, ատրհանակ, թնգանօթ) ստացած վէրքերն առանձին բնաւորութիւն ունեն և կախուած են զէնքերի տեսակներից: Այս զէնքերից տարբերում են ոչ երկար տարածութիւն ձգող զէնքերը. ինչպէս են հասարակ տարրնակը, որսի հրացանը, նոր տեսակի զինւորակն հրացանները, և այլ զանազան տեսակ նոր թնգանօթները:

Նոր տեսակի հրացանները թէպէտ երկարաշիգ են, բայց նոցա պատճառուած վէրքը առաջուակ վնասակարութիւնը չունի:

Ատրճանակները, որսի հրացանները և հին տեսակի մի քանի այլ հրացանները, որոնք արծակում են կոր և երկարաձև արծիճներ, առաջ են բերում ճմլուած և կոտրառուած վէրքեր:

Այդ գնդակները դիպչելով ոսկրերին կամ կոտրում են և կամ ոսկրի մօտ առաջ են բերում նեղուածներ: Յանախ սակայն շեղուում են այդ կերպ հանապարհից և ոսկրի մօտ տափականալով, առաջ են բերում զանազան վէրքեր:

Այժմեան գնդակները, համարեա ամեն զօրքի մէջ, լինում են շատ փոքր կազապարով (մօտ վէց միլիմետր), դոքա նեղ են և երկայն և առաջ են բերում թեթև վիրաւորումներ:

Այս դէպքում թէ առաջին և թէ երկրորդ ծակե ըլ շատ փօքր են, առաջինը ունենում է կլոր ձև, իսկ երկրորդը՝ երկար ճեղքուածի ձեռվ է և հասարակ ճմլուածի տեսք ունի: Նատ յաճախ թափանցում են ոսկրերի մէջ տեղից առանց որևէ կոտրուած և ճեղքուած առաջ բերելու, այսպիսի վէրքից շատ քիչ է պատահում զօրեղ արիւնահոսութիւն:

Ինչ վերաբերում է թնդանօթի պատճառած վէրքերին, այդ կախուած է նորա գնդակի հասածարածութիւնից, կարող է պատահել նոյնպէս, որ գնդակը տանէ մարմնի մի որոշ մասը (ձեռք, ոտք, զլուխը ևն):

Հրազդէներով վիրաւորուածին բժշկելու համար՝ ամենազլիսաւոր խնդիրը պէտք է լինի շուտով կապել վէրքը, առանձնացնել հիւանդին և խնամել: Անպայման իւրաքանչիւր զինւոր վէրքի համար պէտք է ունենայ կապոցներ, որպէս զի զրժախտութեան դէպքում՝ նախ ինքն իրան կապէ, իսկ ապագայ բժշկութիւնը՝ արդէն բժշկի զործն է:

Վէրթի ԲՈՐԴՈՒԹԻՒՆԵՐԸ.

Երբ վէրքի մէջ ընկնում են միկրոբներ, այն ժամանակ նա բորբոքում է և գոյանում է թարախ (ստրեպտոկոկկ և ստրաֆիլոկոկկ):

Բորբոքման զիսաւոր նշաններն են կարմրութիւն, ուռուցք և ցաւ. վէրքի յատակում նկատելի է լինում ցեխալին. մոխրագոյն փառ, լետով արդէն սկսում է վէրքի թարախուելը:

Երբ որևէ չնչին պատճառով, օր. անձաքուր

գնդասեղի ծակելուց, առաջ է գալիս վարակումն մարմնի ներսում առանց մորթու ոչնչացման, այն ժամանակ արդէն թարախը չի կարող դուրս գալ, այլ հաւաքուում է կաշուի տակ և ստացւում է թարախակոյա (աբսցէսուս):

Ենթմորթածաշկի բորբոքումը կոչւում է ֆլէգմոնա: Ներքին պատճառներից առաջ եկած թարախակոյտերը, օրոնք դանդաղ կերպով են անում, առանց որոշ բորբոքման երեսով թների, կոչւում են սառն թարախակոյտեր:

Ոսկրալին մաշկի բորբոքումը կոչւում է պէրիօստիտ, իսկ ոսկրի բորբոքումը՝ օստիօմիելիտ: Երբ ոսկրի բորբոքման ժամանակ ոսկրը փառում է, այդ փառած մասը կոչւում է սեքուեստր, իսկ այդ գործողութիւնը կոչւում նէկրօս:

Վէրքի մասնաւոր բորբոքումը կարող է պատճառ լինել ընդհանուր հիւանդութեան այն ժամանակ, եթէ վարակումը լինում է շատ սաստիկ և երկար ժամանակ վէրքը մնում է առանց բուժուելու:

Բորբոքման տարածուելու առաջին նշանը լինում է աւշալին անօթների բորբոքումը՝ լիմֆանգօիտ: Այդպիսի դէպքերում վէրքում երեսում են կարմիր ցաւեցնող շերտեր, որոնց հետ միանում է և մերձակալ աւշալին գեղների ուռուցքը՝ լիմֆադէնիտ:

Այդպիսի հիւանդալին դրութիւնը առաջ է գալիս սովորաբար թեթև տարութեան հետ միասին:

Երբ վարակիչ հիւթն ընկնի արեան մէջ, այն

ժամանակ կստացուի ծանր հիւանդութիւն, փտումըն, արիւնալին թարախի առաջ գալը, որոնցից շատ մարդիկ նախորդ պատերազմներում կորել են: Սա պիեմիա է կամ սեպալիցեմիա:

Այսպէս ուրեմն, սեպալիցեմիալի և էմպիէմիալի ժամանակ՝ խիստ կարեոր է իսկոյն դիմել բժշկին և թոյլ չտալ, որ հիւանդութիւնը լուրջ կերպարանք ընդունի:

Վերքերի միւս բարդութիւններից մէկն է և կարծիր քամին, որը շատ վարակիչ և ծանր հիւանդութիւն է, հեշտութեամբ անցնում է մէկից միւսի վերըին և առանձնապէս երկիւղալի է, երբ յայտնում է զիխի վրա:

Կարծիր քամու ժամանակ զգացւում է ընդհանուր թուկութիւն, լինում է չերմ և յաճախ սկսում է փսխել. վերքը ցաւում է, մորթին ել սկսում է կարմրել, ուռչել, ձգուել և փալլել, և այդ ամենը բռնում է մարմնի վրա երկար տարածութիւն: Երբեմն մորթու այս տեսակ բորբոքումը տարածւում է զանազան ուղղութեամբ և կարող է անցնել ամբողջ մարմնի վրայով:

Կան վերքի այլ բարդութիւններ էլ, բայց շնորհիւ ժամանակակից վիրաբուժութեան և մանաւանդ ասեպակալի և անտիսեպտիկալի, կարելի է յուսալ, որ պատերազմների ժամանակ դոքա տեղի չպիտի ունենան:

Առանձին տեսակ հիւանդութիւն են ներկայացնում օձերի և կարինների խայթուածը, որի ժամանակ մարմնի մէջ ընկնում է որոշ թոյն և թունաւորում է, իսկ խայթուած տեղն էլ ուռչում է:

Մարդու մարմինը և առանձնապէս սրտի գործունէութիւնն սկսում է թուլանալ:

Որովհետեւ այդ խայթուածները պատահում են, համարեա միշտ, ոտերի և ծեռների վրա, հետեապէս խայթուած մասից մի քիչ վերև պէտք է կապել ուղինէ թերով և կամ մի այլ կապո-



Զե 11. ը.



Զե 11. ա.

ցով, որպէս զի այսպիսով գաղարի արինաղարձութիւնը.

և արիւնատար ա-

նօթներով թոյնը չտարածուի մարմնի մէջ: Բացի այդ՝ նոյնպէս արիւնը ծծելու համար վերքի վրա դրում է չոր ապիկ: Ինչպէս չոր ապիկ կարող է ծառայել ամեն մի բիւմկա, որը սպիրաով թըրջում են մի քիչ, յետոյ վառում են և դարձնում են խայթուած տեղին: Կարելի է նոյնպէս ծծել վերքը, եթէ միայն ծծողն առողջ է և բերնում վերք չունի:

Նոյնպէս և վերքն այրում են տաքցրած երկաթով, ցանկալի է նոյնպէս, որ այսպիսի վերքը լուացուի սպիրտով, կարբօլիալով:

Սրտի թուլութեան դէմ տալիս են օղի, զինի, թունդ սուրճ, բժիշները մորթու տակ սրսկում են նոյնպէս քափուրի իւղ: Իսկ երբ խածում են մարդուն կատաղի կենդանիները, այն ժամանակ նորա վերատառ է զալիս և մի ուրիշ հիւանդութիւն—ջրերկիւղ կամ կատաղութիւն, որն արտայալտում է

կենդանու խածելուց բաւական ժամանակ անցնելուց յետոյ:

Այսպիսի վէրքերը բժշկում են օծերի խայթուածերի նման: Հիւանդին ուղարկում են առանձին հիմնարկութիւններ, ուր նոյա վրա կատարում են պատուաստումներ, հարկաւ այս ամենը ինչքան շուտ լինի, այնքան աւելի լաւ է:

Նատ անգամ գիւղերում սատկած կենդանու վրա հաւաքում են ճանճեր, սոքա վարակիչ հիւթերը կարող են փոխել մարդու վրա, այս դէպքում ևս արագ հասնող օգնութիւնը կարող հիւանդութեան առաջն առնել:

Յաճախ թունաւորուում են սիբիրական խոցով, որը բշափի է մէջ տեղը սև գնդակով, այս խոցերն իսկուն պէտք է այրել աաքացրած երկաթէ ճաղով:

### ԱՐԻՒՆՀՈՍՈՒԹԻՒՆ.

Վէրքերից առհասարակ արիւն է հոսում, ոռովհետեւ երբ առաջանում են վէրքերը, միենոյն ժամանակ վիրաւորում են և մազանօթները—ամենափոքրիկ և նուրբ անօթները:

Այն սովորական արիւնահոսութիւնը, որ տեղի է ունենում թեթև վէրքի ժամանակ և ամեն կողմից մանր կաթիլներով դնում է արիւնը, կոչում է մազանօթալին արիւնահոսութիւն:

Երբ կտրուում է երակը, այն ժամանակ արիւնը հոսում է մեծ բանակութեամբ և ունենում է մութ կապոյտ դոյն: Զարկերակալին արիւնահոսութեան ժամանակ՝ կարմիր արիւնը խփում է ընդհատուող հոսանքով՝ մեծ հեռաւորութիւն:

Մազանօթալին արիւնահոսութիւնը լինում է աւելի զօրեղ մարմնի որոշ մասերում, օր. թոքերի, լեարդի, մայծաղի ևն վիրաւորման ժամանակ, և կամ թէ ծեռի, երբ վերջինս կախ է ձգուած, ոտի, երբ մարդ կանգնած է և կամ նստած: Վերջապէս զօրեղ արիւնհոսութիւն է լինում, երբ մարդ ունենում է արեան վաս մակարգումն, որը կոչում է հէմօֆիլիա:

Արիւնհոսութիւնը դադարում է արեան մակարդման պատճառով, այսինքն, երբ արիւնը անօթից գուրս է զալիս, սկսում է աւելի պնդանալ, որովհետեւ նորա բազկացացիչ մասերը փոխւում են և ստացւում է խտացումն:

Արեան ալդ խտացումը ծոռայում է որպէս մերենայական արգելք արեան յետագայ հոսման: Աւելի խոշոր մեծութեամբ անօթներում արեան այդպիսի խտացումը, որոյ և լցուում է անօթի անցըր, խցանի ծև ունի և կոչում է արոմբ: Բացի արօմբից արեան առաջն առնում են գլխաւորապէս անօթների ներքին թաղանթները, որոնք կծկուելով կամ փոքրացնում և կամ բոլորովին փակում են կտրուած անօթի անցըր:


Աւելի մեծ անօթները, զօրեղ արիւնհոսութեան ժամանակ, չեն կարող փակուել արօմբներով, և երբ մարդ չի մեռնում այսպիսի արիւնհոսութիւնից, այն ժամանակ արեան ընթացըր կարող է կտնգնել սրտի գործունէութեան թուլութեան պատճուի:

Յաճախ կարող է նոյնպէս պատահել, որ արօմբի մի կամ միւս մասը տեղից խախտուի և արեան

հոսանքի հետ անցնի ուիշ անօթներ. վերջապէս կարող է երկար մնալ վէրքից բաւական հեռու օրդաններում և առաջ բերել ալդ տեղ որոշ հիւանդութիւն. այսպիսի երևոյթը կոչում է էմբօլիա:

Մազանօթների և փոքրիկ երակների արիւնակոսութեան ժամանակ պէտք է վէրքը պահել մաքուր փաթաթներով և աշխատել բարձր պահել վիրաւորուած ծասր:

Դիմի արխէնհոսութեան ժամանակ պէտք է նստեցնել հիւանդին, ծեռների արիւնհոսութեան



Ձե 12.

ժամանակ պէտք է վեր բարձրացնել թերքը. իսկ երբ ոտներից է հոսում, պէտք է պառկեցնել կոնակի վրա, ոտերը վեր բարձրացնել և փաթաթներով ածուր կապել: Հարկաւ սառուցն էլ օդուտ է բերում, որովհետեւ անօթները սառելով կծկում են և ալդպիսով արդելք են հանդիսանում արեան հոսելուն: (Տես ձե 12):

Երբ լիշեալ միջոցները այնուամենայնիւ չեն օդնի, գործ են դնում մի ալլ միջոց, որը կոչում է վէրքի տաճապօնացիա և բժիշկների ձեռքում ամենալաւ միջոցն է. իսկ եթէ բժիշկը բացակայ է, խիստ մաքուր պէտք է լինի մարլալից և կամ բամբակից

շինած փոքրիկ կծիկը. կրկնում ենք, այնուամենայնիւ չպէտք է մոռանալ ասեպտիկան և անտիսեպտիկան:

Առանձին կարեորութիւն է ներկայացնուազարկերակների արիւնհոսութիւնը, որովհետեւ այս դէպքում վերոյիշեալ բոլոր միջոցները նպատակին



Ձե 13.

չեն հասնում և այսպիսով մեծ անօթի վիրաւորումը մահուան պատճառ է դառնում:

Այս դէպքում պէտք է ուրիշ միջոցների գիմել, որոնցից ամենազօրեղն է էսմարիսի յայտնի ուկագինէ լախտի միջոցով վիրաւորուած մասի ընդհանուր արիւնաբամութիւնը ափսոսուոր այս կարելի է յարմարեցնել միմիայն ձեռների և ոտերի վրա:

Այս նպատակի համար ձեռքերը և կամ ոտերը բարձրացնում են վերև, ապա ուկագինով և կամ

հասարակ թաշկինակով կապում են ուսից և կամ  
աղջրից և որորում են հաստ կլոր փայտով:



Զւ. 14.

Զւ. 15.

բակների վրա և փակել նոցա անցքը: Այդպէս կա-  
պուած դրութիւնը չորս ժամից աւել չպէտք է  
մնայ, հակառակ դէպքում վերջաւորութիւնների  
փառումն կարող է առաջ գալ: Իսկ եթէ չորս ժամից  
յետոյ չհասնի բժշկի օգնութիւնը, այն ժամանակ  
պէտք է ժամանակաւոր կերպով արձակել կապը և  
մատներով բռնել զիսաւոր անօթը: Չեռի մատներով  
կարելի է բռնել և քնալին, թևատակի, ուսի և  
աղջրերի անօթները, որովհետեւ սոքա գտնւում են  
ուղղակի ոսկորների վրա կաշուի տակ, այս պատ-  
ճառով և լարմար սեղմուելու:

Նոյնպէս կարելի է ասել, որ զօրեղ արիւնա-  
հոսութեան և ընդհանուր թուլութեան ժամանակ,  
բացի քիչքիչ զինի խմեցնելուց, լաւ օգնում է և  
բարձր կիզմա—չորսից հինգ բաժակ տաք չուր  
մինչեւ եռեսուն աստիճան Խէօմիւրի: լաւ է նոյնպէս  
մի բաժակ կաթով հասարակ կիզմա՝ նոյն աստիճա-  
նի, օրական չորս անգամ:

Սրիւնահոսութեան ընթացքում անհրաժեշտ  
է հիւանդին պահել հանգիստ դրութեան մէջ:

Ի դէպս պէտք է ասել, որ ներկայ ռուս ճա-  
պոնական պատերազմի ժամանակ, որպէս արիւն  
կանգնեցնող միջոց, մեծ դեր է խաղում այսպէս  
կոչուած «ինդիվիտուալնի կամ կարմիր պակետը»:

Բոլոր այն վէրքերի ժամանակ, որոնք առաջ են  
դալիս մեծ ոյժի և կամ ծան-

րութեան ազգեցութեան

տակ, բացի փափուկ հիւ-  
սուածքներից, վնասուում են

և ոսկրերը, որոնք այնքան  
աւելի շուտ են կոտրում,

որքան աւելի փիրուն են,  
դորա համար էլ աւելի կո-

Զւ. 16.

տրուում են ծերունիների ոսկորները, քան թէ լոի-  
տասարդներինը, նոյնպէս և երկար ոսկրերն էլ ա-  
ւելի հեշտութեամբ են կոտրում, քան կարմերը:

Ոսկրերի կոտրուելու ժամանակ, եթէ մոր-  
թին ևս վիրաւորում է, այս դէպքում կոչ-  
ում է բարդ կոտրուածք. իսկ եթէ մորթին ան-  
վնաս է մնում և կոտրուում է միայն ոսկորը, կոչ-  
ում է հասարակ կոտրուածք:



Կոտրուածքի ժամանակ կամ զոյանում են ճեղքեր, քերծուածքներ և կամ ոսկորն ամբողջովին է կոտրում: Կոտրուածքները, նայած իրանց ձեին, լինում են ուղիղ, շեղ, կարող է նոյնպէս, առանց ամբողջովթեանը վնասուելու՝ առաջ դալ առանձին կտորտանքներ:

Բարդ կոտրո, ածների ժամանակ՝ կարող է այդ տեղ գոյանալ թարախ. այսպիսի թարախակալումը բարդ հիւանդութիւն է առաջ բերում, որը նախնի պատերազմների ժամանակ ոչ պակաս զոհեր է տարել, որովհետեւ այդպիսի կոտրուած տեղում կարող են ընկնել զանազան ձիկորներ:

Ախտահանութեան համար իօդաֆօրմի մարլիախով տամպօններ պէտք է. յետով կապել վերքը այնպէս, ինչպէս վերը նկարազբւած է և գնել անշարժ փաթաթ:


Երբ կոտրուած տեղերն առողջանում են, այդ տեղերում առաջ է գալիս այսպէս կոչուած ոսկրալիս մազոլ, որը կոտրուած ոսկրերը պինդ կերպով միացնում է միմիանց հետ, իսկ երբ կատարելապէս առողջանում է, մազոլը անհետանում է:

Երկար օսկրերի կոտրուածները, որ շատ անգամ է պատահում, առանձին հետաքրքրութիւն են ներկայացնում և ինքուրոյն յատկութիւն ունեն: Գլխաւոր նշանն է՝ սուր ցաւ. նոյն իսկ հասակաւոր մարզիկ ուշագնաց են լինում ցաւի պատճառով և անհնար է լինում այդ մասը շարժելը:

Նոյն յատուկ ուղիղ ձեր փոխում է և կոտրուած տեղում առաջ է գալիս ուռուցք. շարժուե-

լու ժամանակ այդ աեղերում լուռում է մի տեսակ ճարծատում, որը կոչում է կրեպիտացիա:

Կոտրուած ոսկրերը բժշկելիս՝ նոյն պիտուալ նախ և առաջ իրանց ընական ձեր և պահելու համար այդ դրութեան մէջ պէտք է գործ ածել



Զե 17.

անշարժ պահող կապոցներ, որոնք զանազան կարծըր իրերից են կազմուած առաջին օգնութեան համար, օր. փախ, ծառ, իսկ պատերազմում՝ նոյն իսկ թրի պատեան, սուբիններ ևն. այս կարծըր նիւթերի և մարմնի մէջ պիտ գնել միւռեկ փափուկ բան, բամբակ, շապիկ, շոր ևն:

Առհասսարակ փաթաթների վրա բսում են մի որևէ մածուցիկ հիւթօր. կրախմալ և կամ գիրա, սա արդէն բժշկի գործն է:



Զե 18.

Անշարժ պահող կապոցը գնելիս՝ ինկատի պիտ

ունենալ և այն հանդամանքը, որ բացի կոտրուած տեղն անշարժ կերպով ամրացնելուց, դորա մերձա-

երկու յօդերն ել պէտք է անշարժ զրութեան մէջ պահել, այս կերպ միայն կոտրուած տեղը կարող է չարժագուել: Այսպէս օրինակ, սրունքների կոտրուածքի ժամանակ, անշարժ կերպով պէտք է ամրացնել ոչ միայն սրունքը, այլ և ծնկների և կրծքի յօդերը:

Կրծքի վանդակին զօրեղ հարուած ստանալիս, կամ մի որեւէ կարծր բանի վրա ընկնելիս, սովորաբար կոտրուած են կոդերը, կոտրուած տեղում որոշ ցաւ է զգացնում, որը խորը շնչառութեան և կամաւոր հազի ժամանակ զօրեղանում է, այսպիսի երեսով թնակն արդէն կողի կոտրուելու զիսաւոր նշանն է:

Պէտք է լայն և երկայն երեսսրբիչներով ամուր կապել կրծքի վանդակը, իսկ արտաշնչութեան ժամանակ կարելի է թեթևացնել:

Հրազէներից առաջացած կոտրուածքները միշտ բարդ են լինում և երկիւզալի են, որովհետեւ կոտրուած տեղում կարող են լինել ոսկրի բազմաթիւ կտորտանքներ, չարդուածներ և ճեղքեր: Կասկած չկալ, որ հարկաւոր է լուրջ ուշադրութիւն և վերաբերմունք:

Խախտուածներ. այնպիսի վնասուելն է կոչւում խախտուած, երբ ոսկրերի յօդերի կանոնաւոր միացուածը խանդարուած է:

Արտաքին պայմանները, որից առաջանում է խախտուածը, նոյնն է, ինչ որ առաջ է բերում չարգուածը—վայր բնկնելը, հարտած բնդունելը, ոտ-

ների և ծեռների անգոյշ, կոպիտ շարժուելը, այս ամենը կարող են պատճառ լինել ոսկրի խախտուածուն: Ամենից շատ ուսի, կոնքի, և ազդրի յօդերն են խախտուած, որովհետեւ սոքա աւելի շատ են շարժուած:

Խախտուածի, ինչպէս և կոտրուածի ժամանակ զգացնում է սուր ցաւ, առաջ է գալիս ուռուցք, յօդի ծեփ փոփոխութիւն, շարժուածների սահմանափակութիւն, չի լինում և կրեպիտացիա: Այս զէպքում մեծ օգուտ են բերում ոչնդգչնեան ճառագայթները:

Խախտուած մասը տեղը դնելիս, պահանջւում է առանձին հմտութիւն, վնասուած տեղի վրա պէտք է դնել սառն կոմպրես, գուրս ընկած մասը պահել անշարժ զրութեան մէջ: Սառը կոմպրեսը պակասացնում է ցաւը և արիւնահոսութեան տուածն առնում:

Կաջ նոյնպէս յօդերի կապերի ծգումն, այսինքն երբ ոտքը ոլորտում է, ոկղում պիտի սառեցնել, ապա նոր դնել տաք փաթաթներ, հարկաւոր է մասած և յօդերի ամուր պնդացում:

**ԱՅՐՈՒՅՆԾ ԵՒ ՑՐՑԱՇԱՐՈՒՄՆ.**

Մեր մարմնի վրա արտաքուստ ստացած տաքութեան բարձր աստիճանը, օր. բոց, եռացած շուր կամ իւղ և կամ ծիւթ, շեկայտ երկաթ են. երբ ներգործում է, առաջ է բերում վնասումներ, որը և կոչւում է այրուածք: Տաքութեան թով ներգործութիւնը միայն առաջացնում է ցաւեցնող

կարմրութիւն և որոշ չափով ուռոցք, այս կոչ-  
ում է առաջին աստիճանի ալրուածք:

Իսկ երբ տաքութեան ներգործութիւնը աւելի  
զօրեղ է լինում, այն ժամանակ բացի կարմրու-  
թիւնից և ուռուցքից գոյանում են բշտիկներ, որոնք  
լցուած են լինում դեղնագոյն զրալի հեղուկով,  
այս արդէն կոչում է երկրորդ աստիճանի ալ-  
րուածք: Իսկ տաքութեան ամենաղօրեղ դէպքում ոչ  
թէ միայն մորթին է ածուխ դառնում, այլ մարմնի  
խորը գտնուած հիւսուածքներն ել, այս ել կոչում  
է երրորդ աստիճանի ալրուածք:

Բոլոր, նոյն իսկ առաջին ալրուածքն ել, երբ  
բռնում է ամբողջ մարմնի մի երրորդ մասը, կարող  
է իսկոյն մահ առաջ բերել:

Մարմնի այսպիսի մեծ մասով ալրուած հի-  
ւանդները անտարբեր և քնկու են լինում և ցաւ  
չեն զգում, վերջին հանգամանքը միշտ վատ նշան է:

Այդպիսի հիւանդների սիրտը թույլ և արագ  
է բարախում և այսպիսով սրտի դործունէութեան  
աստիճանական թուլացումով առաջ է գալիս մահ:

Առաջին և երկրորդ աստիճանի ալրուածքնե-  
րին շատ լաւ օգնում է սօդա. յետոյ կարելի է նոյն-  
պէս մի որեւէ իւղով, օր. մաքուր կտաւատի ծէթով,  
բորնի վաղելինով և կամ կրից պատրաստուած  
օժանելիքով քսել ալրուած տեղը: Առաջին ցաւերն  
անցնելուց յետոյ, պէտք է մկրատով կարել բշտիկ-  
ները և թարախի առաջն առնելու համար՝ չպէտք  
է մոռանալ մաքուր պահել վերքերը:

Երրորդ աստիճանի ալրուածի ժամանուկ՝ հի-  
ւանդութեան ընթացքո ամբողջովին կախուած է

ալրուած տեղի ընդարձակութիւնից և խորութիւնից:  
Երբորդ տեսակի ալրուածն արդէն ժանր հիւանդու-  
թիւն է:

Հիւանդը պէտք է այնպիսի դիրք ընդունի,  
որ ալրուած անդամը ծգուած դրութեան մէջ  
մնայ: Եթէ ալրուել են մարմնի միմեանց հետ  
շփող մասերը, օր. մատերը, այն ժամանակ դոցա  
արանքը պէտք է դնել ծէթի մէջ թաթախած  
բամբակ, որպէսզի առողջանալու ժամանակ մատերը  
միմեանց չկպչեն: Օգտակար է ալրուած տեղի հա-  
մար և երկարատև լողարանը, սա արդէն բժշկի  
գործ է:

Սառնամանիքի աղեցութիւն կարող է ա-  
ռաջ գալ մարմնի ընդհանուր և կամ մասնաւոր մա-  
սի ցրտահարութիւնից: Նախ ցրտահար տեղը կարմր-  
րում է և բոր է գալիս, յետոյ ուռչելով ցաւեր է  
պատճառում, մորթին կոշտանում է, ուռչում և  
տեղ-տեղ բարձրանում է և բշտիկներ է կաղմում,  
իսկ երբ շարունակուի ցրտի աղեցութիւնը, այն  
ժամանակ ցաւը պակասում է, առաջ է գալիս անրդ-  
գայութիւն և մորթու պնդացումն. այսպիսի դրու-  
թեան մէջ մարդ ուղում է քնել, զուլիր թեքում է  
և սիրտը թուլանում, պէտք է աշխատել խանդա-  
րել նրա բունը, ապա թէ ոչ՝ կարող է մահ առա-  
չանալ:

Ընդհանուր ցրտահարութիւն պատահում է յոդ-  
նած և հարբած մարդկանց հետ, երբ սոքա քնում են  
սառնամանիքում: Սառած մարզք ընկնում է ան-  
գիտակից դրութեան մէջ հազիւ նկատելի շնչառու-  
թեամբ և սրտի բարախումով, գէմքը ստանում է  
մահուած դեղին զոյն, շրթունքները բիթը և ա-

կանչները կապտում են և փայտացած անդամները  
լրացնում են ընդհանուր ցրտահարութեան պատ-  
կերը:

Օգնութեան հասնելու ժամանակ ամենենին չը-  
պէտք է զիմել ձարմնի խսկոյն տաքացնելուն.  
պէտք է ամենից առաջ տեղափոխել մի որեւէ ցուրտ  
տեղ այնպիսի զգուշութեամբ հանել շորերը, որ չը-  
վնասուեն փայտացած անդամները, յետոյ՝ մի կտոր  
շոր թրչել սառնչրով և կամ ծիւնով և սկսել շփել  
մարմինը: Երբ ցրտահար տեղը շփելուց քիչ տաքա-  
նալ, այն ժամանակ արդէն կարելի է փոխա-  
դրել սենեակ և տալ մի քիչ զինի կամ օղի:

Լաւ է քսել նոյնպէս սագի ճարպ և կամ իխ-  
տիօրի օժանելիք:

Զմոռանալ, որ պէտք է տաքութիւնը ներսից  
դաւ և ոչ դրսից:

Եւ որովհետեւ մեր այս գերքը զրելիս աչքի  
առաջ ենք ունեցել հայ զինւորին, այդ պատճառով  
և աւելորդ չեմ համարում այստեղ առաջ բերել  
հայ զինուորներից մէկի զրած նամակը իւր ըն-  
կերին, որն ըստ իւր բնաւորութեան համապատաս-  
խան է մեր այն ընդհանուր զիտաւորութեան, որը  
եղաւ զիսաւոր շարժառիթը ներկայ աշխատութեան:

«Նատ հեռու տեղերից եմ զրում քեզ, սիրելի  
ընկեր, այս նամակը: Այստեղ սկզբներում ինձ հա-  
մար շատ ծանր էր, որովհետեւ չունեի ոչ մերձաւոր  
և ոչ ընկեր: բայց յետոյ ես դատայ մի այլ ընկերա-  
կան ընտանիք, որը թէպէտ կազմուած է դանազան

ազգութեան պատկանող մարդկանցից, բայց միա-  
յած ընկերական և եղբայրական սուրբ սիրով, հան-  
գիսանում է որպէս գաղափարական ընտանիք: Այդ  
ընտանիքի անդամներն են. ուսներ, լիհացիներ, ֆին-  
լանդացիներ, վրացիներ, կազանի թուրքեր և այլ  
ազգութեան պատկանողներ:

Մեզ բոլորիս միմեանց հետ կապում է մի գա-  
ղափար և մի նպատակ, բարոյական ոյժը գաղափարն  
է, որի պահանջը մեզանից իւրաքանչիւրը ցանկա-  
նում է կատարել բարեխզծութեամբ: Իւրաքանչիւրս  
ունենք բարի նախանձախնդրութիւն—աչքի ընկնել  
բարի վարքով և յառաջաղիմութեամբ:

Մեր զօրաբաժնում կային և անգրագէտներ,  
յաւօք սրտի ևս էլ այգպիսիներիցն էի. բայց ահա  
կարճ ժամանակում սովորեցի երկու լեզու այնքան,  
որ կարող եմ զրել և կարդալ: Գրագիտութիւնը շատ  
գժուարութեամբ իւրացընք, բայց դու չես կարող  
երեակացել, թէ ինչ ուրախութիւն եմ զգում, երբ  
կարգում եմ և վերահաս լինում, թէ ինչ է կատարում  
կեանքում, որը մինչեւ այդ ժամանակ ինձ անձա-  
նօթ էր:

Մի կարծիք սակայն, թանկագին ընկեր, որ  
ալգպէս հեշտ զնաց և այլ զործերում, բայցի ուսու-  
մից: Ինձ շատ ցաւ պատճառեց այն հանգամանքը,  
որ ես, համարեա, գաղափար չունեի զէնքի գոր-  
ծածութեան և մարմնամարզութեան մասին. ինձ  
մինչեւ ալժմս էլ տանչում է այն միաքը, թէ ինչու  
այդ բոլորով չէի զբաղւում տանը, բանի որ պար-  
տական էի:

Ահա այժմ զինուած ալսպիսի ոյժերով, չես կարող երևակայել, թէ ինչ բարոյական և փիզիքական զօրութիւն եմ զգում, դիտեմ, որ այժմ կարող եմ կանգնել իմ պատուիս պաշտպան. այս, այժմես ուժեղ եմ: Եւ երբ ես լիշում եմ, որ կոչի ժամանակ ուզում էի խոյս տալ, ինքս ինձանից եմ ամաչում, որովհետեւ դա բարոյական պարտականութիւնը չհանաչելուց էր առաջ դալիս. և ես այժմ հպարտ եմ, որ այնուամենայնիւ կարողացել եմ բարոյական պարտքս կատարել:

Ճիշտ է կանցնեն տարիներ, նոյն իսկ դարեր և պատերազմը կվերջանայ, ինչպէս ասաց մեր սպան և քաղաքական բարդ խնդիրները կվճռուին միջազգային դատով և ի վերջոյ իւրաքանչիւր անհատ յանձին միւսի պիտի յարգէ մարդկային և աստուածային օրէնքը, բայց դեռ ևս այդ չկայ և այժմ պէտք են զինւորներ:

Ի վերջոյ, ընկեր, ես շատ կցանկալի, որ մեր դիւղերում և քաղաքներում, ուր ամեն մէկս կորցնում ենք մեր անձնաւորութիւնը և ամեն ինչ... կազմակերպուէին այդպիսի ընտանիքներ, ինչպէս այստեղ է: Ուստի անհրաժեշտ է որմէկս բոլորի համար, բոլորն էլ մէկի համար ապրենք: Ֆէ որ մարդիկ եղբայրներ են: Մենք բոլորս մէկ պեսութեան և երկրի զաւակներ ենք. և երբ հասնէ բոպէն, դուրս կգանք զէնքը ձեռներիս, ինչպէս մի մարդ, որպէս զի այդպիսով բարձրանալ մեր հայրենիքը...»

Այսպիսի մտացի և խոհուն նամակի վրա չեմ կարող չաւելացնել և հետևեալը:

Բարուայ ներկայ դժբախտութիւնից առաջ մարդիկ կարծում էին, թէ իսկական երշանկութեան

հիմքը հարստութիւնն է, որով կարելի է ապրել ապահով և հանգիստ, բայց այդ սարսափելի օրէրը ցոյց տուին, որ միայն ինքնապաշտպանութիւնն է մարդուն փրկողը և ուրիշ որևէ արտաքին օգնութեան վրա յոյս գնել չի կարելի, որովհետեւ այդպիսի ոյժը այսօր կայ, վաղը չկայ. իսկ սեփական ոյժը ինքնապաշտպանութեան համար միշտ գտնւում է անձի գրամագրութեան տակ:

Իսկ այժմ այս բազմաթիւ զոհերի, այսքան նեղութեան և թշուառութեան առաջ թող բոլոր կովկասի տարրերն աշխատեն, որ նոցա միաբը, հոգին և ամբողջ կեանքը նուիրուած լինի կովկասի ազգերի եղբայրութեան և միութեան ամրապնդման, իփառս ընդհանուր հայրենիքի:

Կովկասեան ոչ մի ազգութիւն չի կարող ապրել առանց կովկասեան միւս ազգութիւնների և նա, ով սիրում է իւր ազգն ու հայրենիքը, պիտի սիրէ և կովկասը և նրա միշի բոլոր ազգութիւնները:

Թող Բաքուում թափուած անմեղ արիւնը՝ իրեն զոհ լինի կովկասեան ազգերի եղբայրութեան դաշնքի համար: Որովհետեւ մարդիկ ուժեղ են, երբ կազմում են մի հոգի. եղիք հաստատուն: Անհրաժեշտ է ինքնակատարելազորժութիւն թէ Փիզիքական, թէ մտաւոր և թէ բարոյական. միւնոյն ժամանակ արիութիւն նշմարիտ գիտազգութեամբ և հաւաքական ուժով ազնիւ աշխատանք:

Պէտք է նկատել, որ ժողովրդական կեանքի կանոնաւոր զարդացման համար նոյնքան վնասակար է ազգային ինքնահաւանութիւնը, տիմար և գոռող ինքնաբաւականութիւնը, որքան և չա-

փաղանց ստորացումը, թերահաւատ լինելը իւր ոյժերի վրա և ժողովրդական ոգու թուլացումը։ Ժողովրդական ինքնարաւականութեան զգացումը և անտարբեր վերաբերմունքը դէպի շրջապատը, անտես առնելը ժամանակի ոգին, լոյս դրնել կառավարութեան ոյժերի վրա և անձամբ մատով անդամ ջարժել, այս բոլորը առաջ կբերեն արդիականութիւն և կեանքի մեռելու թիւն, ինչպէս Զինաստանում։


Պէտք է զարթեցնել մեր քնկոտ ժողովուրդը և նորան առաջնորդել դէպի երոպական ընդհանուր քաղաքակրթութեան լոյսը։

Այս պատճառով անհրաժեշտ է օրինակ ցոյց տալ գործով, բարձր և յանախ կոչել, որպէս զի խուլն էլ լսի, քնածն էլ զարթնի իւր քաղցր երազներից և գիտակցի դառն իրականութիւնը։ Առանձին, մէն մենակ ոչ ոչինչ չի կարող անել, անհրաժեշտ է միութիւն, միահամուռ գործունէութիւն։ անհրաժեշտ է ամբողչ խմբերի և հասարակութեանց գործակցութիւն։ Թող անցեալի և ներկալի դասերը տան հաստատուն հաւատ ապագալի հանգստութեան համար, կրրկնում ենք, անհրաժեշտ է կազմակերպեալ համերաշխ գործնէութիւն աղջի գոյութեան կոուի մէջ յանուն համամարդկալին լրւաւոր գաղափարների։ Ժամանակը վճռողական է. գործի պահանջը ստիպողական։

Աղնիւր — ուժեղ է. իսկական ոյժը — անձնադրութեան մէջն է...»

Պէտք է ուրեմն շատապել...»

Ա. Պ - ԲՈՒՐԳ 21/II.



ՑՈՎՅԱՆՆԷԿՍ ԱՐԱՄԵԱՆՑԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՀԵՏԵԽԵԱԼ ՊԱՏԿԵՐԱՀԱՆՆԵՐԸ ՀՐԱՏԱՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

- |  |       |
|--|-------|
| 1. Բեօրնսօն՝ կազմեց Ե. Թոփչեան . . .                               | 10 կ. |
| 2. Մահմեդ՝      »      » . . .                                     | 7 »   |
| 3. Մեսրոպ Մաշտոց՝ կազմեց Ե. Թ. . .                                 | 5 »   |
| 4. Սահակ Պարթև՝      »      » . . .                                | 5 »   |
| 5. Հառովտման՝      »      » . . .                                  | 15 »  |
| 6. Մեծն Ներսէս՝      »      » . . .                                | 5 »   |
| 7. Զրագաշա կազմեց Մ. Թամամշեան . . .                               | 7 »   |
| 8. Ընտրութիւն կաթնատուների (26 պատի.)<br>Գ. Մեծատուրեանի . . . . . | 15 »  |
| 9. Ռ. Վիրխով՝ կաղ. Ա. Բուգուղեան . . .                             | 25 »  |

Ճուտով լոյս է տեսնելու՝

Պուշկին.

Պատրաստ է տպագրութեան համար՝  
Աւ. Քալանթար. — Հանրամատչելի մեռնարկ կաթնատութեան։

Պատրաստում են նոր հրատարակութիւններ։



Լոյս տեսաւ. Ե. Թոփչեանի խմբագրուն «Լոյս» պատկերագարդ օրացոյցները 1906թ. (զրադանի սեղանի և պատի):

Դիմել՝ Թիֆլիս Գանովսկայա 11



Թ. Ա. ԲՊԱԳՈՒՂԵԼԻՆԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1.	Առաջին օգոստին մինչև բժշկի գալը (սպառ.)	5	կ.
2.	Վարակիչ հիւանդութիւններ . . . . .	5	"
3.	Ի՞նչ է սիֆիլիսը . . . . .	5	"
4.	Առողջապահական զբայցներ . . . . .	5	"
5.	Ի՞նչ է ժուժկալութիւնը . . . . .	5	"
6.	Ի՞նչ է անառակութիւնը . . . . .	5	"
7.	Աներեական ախտեր . . . . .	5	"
8.	Աշակերտի առողջապահութիւն . . . . .	2	"
9.	Մեր նեարդերը . . . . .	10	"
10.	Սիֆիլիս (բարեփոխուած)	10	"
11.	Առողջ հոգին առողջ մարմնի մէջ . . . . .	10	"
12.	Գեղձախտ (զօլօտուխա)	10	"
13.	Ո՞վ է յանցաւորը . . . . .	15	"
14.	Կարիք և բարիգործութիւն . . . . .	15	"
15.	Ժառանգականութիւն և դաստիարակութիւն . . . . .	15	"
16.	Մանկավարժական համառօտ զբայցներ . . . . .	15	"
17.	Մարմնամարզութիւն (25 պատկերով)	20	"
18.	Առողջապահական նուէր նորատի կանանց . . . . .	20	"
19.	Կինը և տղամարդը . . . . .	15	"
20.	Վիրարուժական հիւանդութիւն և օպերացիա	5	"
21.	Ի՞նչ է կաշու հիւանդութիւնը . . . . .	15	"
22.	Երիտասարդութիւն և ծերութիւն . . . . .	15	"
23.	Առողջ ու հիւանդ երեխայի ողին . . . . .	20	"
24.	Ուղեղի սիֆիլիսը (զինի և ողնաշարի)	20	"
25.	Ստամոքսի կատարը . . . . .	20	"
26.	Քուն և երազ (մի պատկերով)	25	"
	Մեծադիր պատկեր «Քուն և երազ» առանձին	10	"
27.	Գործարան թէ երկրագործութիւն . . . . .	15	"
28.	Սնապաշտութիւն ու կախարդութիւն . . . . .	20	"
29.	Մաերժական հորիչուրդներ պատանիներին . . . . .	20	"
30.	Գյոււթեան կախ . . . . .	20	"
31.	Վիրիսով . . . . .	25	"
32.	Սէր և ինազ (մի պատկերով)	20	"
33.	Անառակութիւն և պրոնիկութիւն . . . . .	20	"
34.	Նուէր հայ զինւորին . . . . .	20	"
35.	Նուէր հայ գարճապետին (զպրոցական առողջապահութիւն մամուլի տակ է):		

Գիմի 20 կ ԱՊ.

Դի Մ Ե Լ՝ Թիֆիս կենցր. մասկան և Գուտանենբերդ

Պահեստը գանւում է, Պետերբուրգ:

«Պաշտինեան արագատիպ» Լեշտուկով փ. տ. 4.